

Հ. ՆԱՍԿԱՆՅԱՆ

ԽԶԱՆՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ



ՀԱՅՏԵՏՀՐԱՆ

13777

891.99(09) [Արժույթ]

Դ-36 Հանձնարարագիր.

Խաչատրյան Արժույթ

|  |  |
|--|--|
|  |  |
|  |  |
|  |  |
|  |  |

891.99.092 [Արուստի]

Ն-36

Հ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Ֆիլ. գիտ. դոկտոր

ՍՏՈՒԳՎԱՅ Է 1981 թ.

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

13777.

A  $\frac{I}{6430}$



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

Ե Ր Ե Վ Ա Ն

1948

ОВ. ГАНАЛАНЯН  
Доктор фил. наук

ХАЧАТУР АБОВЯН

(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1948 г.





*Von der Weyhe*



Խաչատուր Աբովյանը գրական ասպարեզ իջավ անցյալ դարի 30—40-ական թվականներին: Նրա կյանքն ու ստեղծագործությունը զուգադիպում է մի այնպիսի ժամանակաշրջանի, երբ հայ ժողովուրդը հեծում էր պարսկական բռնապետության ծանր լծի տակ:

Աբովյանը, ինչպես ինքն է ասում, ծնվել է 1804—1805 թվերին Քանաքեռ գյուղում: Սերել է նա Քանաքեռի հայտնի Աբովյանների տոհմից: Տակավին 10 տարեկան պատանի էր նա, երբ հայրը տանում է որդուն էջմիածին և խնդրում Նվրեմ կաթողիկոսին հոգալու իր զավակի ուսման գործը: Էջմիածնի վանքում Աբովյանը սովորել է 5 տարի: Անհրապույր են եղել Աբովյանի ուշակերտական կյանքի այդ տարիները: Վանքի անձով խցիկներից մեկում օրն ի բուն կրած աստվածաբանական հնոտի գրքերի վրա, զանազան մետաֆիզիկական հարցերով շարշարելիս է եղել նա իր ուղեղը:

Ժամանակակիցներից մեկի վկայությամբ «Աբովյանը մեծացել է վանքում արցունքի, աղոթքի և պատի մեջ, այդ վայրենի, անընդունակ որևէ ազնիվ բանի, անբնականորեն կրքոտ մթնոլորտի մեջ»: Շուրջ 5 տարի էջմիածնում մնալուց հետո Աբովյանը մեկնում է Թիֆլիս, ուր «Հյուսիսստիպլ»-ի ապագա խմբագիր Ստեփա-



նոս Նաղարչանի հետ միասին մտնում է Պողոս «գիտ-  
 նական» վարդապետի դպրոցը: Նաղարչանի վկայու-  
 թյամբ այդ «գիտնականը» ավելի ծեծ, քան՝ ուսում է  
 տվել յուր սաներին: 1824 թվին, երբ բացվում է Ներ-  
 սիսյան դպրոցը, Աբովյանը տեղափոխվում է ուսում-  
 նական այդ նոր հաստատությունը, ուր այն ժամանակ  
 ւսուցչի և տեսչի պաշտոնով աշխատում էր Մոսկվայից  
 հրավիրված, ժամանակի մաքուր՝ ամենաբանիմաց ման-  
 կավարժ Հարություն Ալամդարչանը: 1826 թվին էր,  
 երբ Աբովյանը երկդասյան կրթություն ստանալով դուրս  
 է դալիս Ներսիսյան դպրոցի 3-րդ դասարանից, նպա-  
 տակ ունենալով Վենետիկ մեկնելու և այնտեղ շարու-  
 նակելու իր ուսումը: 1826 թվին ծայր առած ուսու-  
 սյարսկական պատերազմի պատճառով ի դերե ևն ել-  
 նում Աբովյանի Վենետիկ մեկնելու ցանկությունները, և  
 նա ստիպված վերադառնում է էջմիածին և Շիրեմ կա-  
 թողիկոսի մոտ ստանձնում է թարգմանի և քարտուղարի  
 պաշտոնը: Էջմիածնի հաստահեղույս պարիսպների մեջ  
 պարփակված, աշխարհիկ կյանքին ու իր ժողովրդին  
 օգտակար դառնալու հնարավորությունից զրկված,  
 Աբովյանը, մերձանկարը կորցրած մարդու պես ընկ-  
 նում է մտառանջության մեջ. «Էսպես բաներ մտածե-  
 լով, օրս ու ումբոս մաշվել էր», մտաբերում ենք նրա  
 հետագա ժամանակներում ասված այս խոսքերը: Հոգե-  
 կան այսպիսի ծանր տաղնապների մեջ էր Աբովյանը  
 էջմիածնում եղած այդ տարիներին, երբ 1829 թվին  
 էջմիածին եկավ Դորպատի համալսարանի ֆիզիկոս-  
 ներից մեկը՝ պրոֆեսոր Պարրոտը, Արարատի գաղաթը  
 բարձրանալու նպատակով: Կաթողիկոսի կողմից Աբո-  
 վյանը նշանակվում է Պարրոտի ուղեկիցը և թարգմանը:



Աբովյանը սիրով հանձն է առնում ուղեկցել Պարրոտին, որը ցանկանում էր բարձրանալ «անհաս փառքի ճամփա» հանդիսացող Մասիսի գագաթը։ Աբովյանը հոգու անօրինակ արիություն է ցուցաբերում այդ դժվարին վերելքի ժամանակ և առաջինն ինքն է, որ 1829 թվի սեպտեմբերի 27-ին կեսօրին ոտք է դնում Արարատի կատարը։ Այդ ճանապարհորդությունների ժամանակ Աբովյանը բաց է արել Պարրոտի առաջ իր սիրտը և խնդրել նրանից օժանդակել իրեն Մոսկվայում կամ Դորպատում ուսանելու։ Պարրոտը խոստանում է կատարել նրա թախանձանքը։

Մեկ տարի հետո 1830 թվին Աբովյանն ստանում է Պարրոտի հետևյալ նամակը, որին սրտի անձկությամբ սպասել էր նա։ «Սիրելի բարեկամ, որոշված է ձեր վիճակը, կատարվել է, ինչ ցանկանում էիք...»։

Ստանալով Պարրոտի հրավեր այս նամակը, Աբովյանը ժամ առաջ հրաժեշտ տվեց էջմիածնի վանքին։ Վանականները հարձակվելով Աբովյանի վրա խլում են նրա շորերը և ճամփի պաշարը ու անպատկառ խոսքերով աղատ արձակում նրան դեպի օտարություն։ Այսպես դնաց Աբովյանն էջմիածնից, հայ ժողովրդի մրմուռ վերքը սրտին։

1830 թ. օգոստոսին էր, որ Աբովյանը Թիֆլիսից Պետերբուրգի վրայով մեկնեց Դորպատ։ Հասնելով Դորպատ և ներկայանալով Պարրոտին Աբովյանը նրա խորհրդով համալսարանում որևէ նեղ մասնագիտություն չընտրեց։ Պարրոտը նրա համար ուսման առանձնահատուկ ծրագիր մշակեց, նկատի ունենալով այն, որ Աբովյանը վերադառնալով իր հայրենիքը մանկավարժությամբ պիտի զբաղվեր։ Աբովյանն իբրև աղատ ուն-

կընդիր հաճախել սկսեց համալսարանի տարբեր ֆակուլտետներում դասավանդող հոմանիտար գիտությունների պրոֆեսորների դասախոսություններին: Համալսարանի դասերից դուրս Աբովյանը հաճախել է նաև Դորպատի ուսուցչական «գեմինարը» ծանոթանալու այնտեղ ավանդվող առարկաների մանկավարժական մեթոդների հետ: Եվ վերջապես այդ ուսումնական հաստատությունների ակադեմիկ ժամերից դուրս նա մասնավոր դասեր էլ է առել մի շարք պրոֆեսորների մոտ, հյուրընկալվել նրանց ընտանիքներում և ծանոթացել վերջիններիս կենցաղի մանրուքներին: Ի լրումն այս ամենի, վաղ շրջանի լուսավորիչների նման, Աբովյանը սովորել է Դորպատում մի շարք գործնական բաներ ևս—ապակի շինել, անուշեղեն պատրաստել, այդ ամենը հայրենիքում օգտագործելու համար:

Դորպատյան կյանքի այդ տարիներին Աբովյանի ներաշխարհը հեղափոխող հզոր գործոններից էին նոր շունչ բերող, ուսական մեծ գրականությունը—Կրիլովը, Դիմիտրովը, Կարամզինը, Ժուկովսկին, ինչպես նաև օտար հեղինակներից Ռուսոն, «Գրոհի և փոթորիկ» շրջանի պոետները—Շիլլերը, Գյոթեն, Հերդերը, որոնք դառնում էին Աբովյանի սիրելի հեղինակները:

Դորպատյան կյանքի այդ տարիներին էր, որ Աբովյանը ականատես եղավ ուսանողության կազմակերպած «էստոնական գիտական ընկերության» գործունեությանը, որը մեծ ջանասիրությամբ ու գիտակցական վերաբերմունքով ուսումնասիրում էր էստոնական ժողովրդի ֆոլկլորը, կենցաղը, ազգագրությունը: Այդ հանգամանքը ևս աննկատ չի մնացել մեր հեղինակի համար: Ի պատիվ Աբովյանի պիտի ասել, որ եթե



Դորպատում գիտական մի ամբողջ ընկերություն էր  
զբաղվում ֆուկլորի հավաքագրման գործով, ապա  
Աբովյանը յուր հայրենիքում մեն-մենակ ձեռնամուխ  
եղավ ֆուկլորի հավաքագրման գործին, զուրկ նյութա-  
կան միջոցներից:

Շուրջ վեց տարի մնալով Դորպատում, և ինչպես  
Սանտիանոս նազարյանն է ասում, «մերտվելով Դորպա-  
տի իմացության ավազանում» 1836 թվին Աբովյանը  
վերադարձավ հայրենիք գործելու բարձր իդեալները  
սրտում: Մեծ եղավ այդ վեց տարիների ընթացքում  
հոգով ու մտքով հասունացած Աբովյանի զարմանքը,  
երբ հայրենիքում ամեն ինչ տեսավ նախկին անփո-  
փոխ վիճակում: Իր մտավոր լույսով նա պիտի փառա-  
տեր հայրենի խավարը: Եվ որքան որ խավար էր գիշե-  
րը հայրենիքում, այնքան ավելի վառ էր փայլում  
Աբովյանի աստղը: Հասնելով Թիֆլիս Աբովյանը տե-  
սակցություն ունեցավ կաթողիկոս Հովհաննես Կարբե-  
ցու հետ, ներկայացնելով նրան օտար դավանության-  
ների նախարարի հանձնարարական նամակը: Հովհան-  
նես կաթողիկոսը Աբովյանին լութերադավան դառած  
համարելով, մոլեգնած բացականչում է. «Հրամանով ես  
դալիս ինձ վրա, հավատից վտարված. դու լավ խմորի  
կարող ես անմեղների միտքը, խակ նրանց կրթելը քո  
գործը չի»:

Դա Աբովյանի դեմ ծառացած ձախողությունների  
սկիզբն էր:

Մոտ մեկ ու կես տարի առանց պաշտոնի մնալուց  
հետո, վերջապես 1837 թ. փետրվարի 12-ին Աբովյանը  
նշանակվում է Թիֆլիսի դավառական դպրոցի տեսչի  
պաշտոնակատար:

Հաջորդ 1838 թ. Աբովյանը մի դիմում է անում սինոտին և հրաժարվում է յուր հոգևոր կոչումից, իսկ 1839 թ. ամուսնանում է էմիլիա Լոզե անունով օրիորդի հետ: Ի դեպ, բացի Թիֆլիսի դավառական դպրոցից, Աբովյանը բաց է անում նաև իր սեփական տանսինը, մեծ խնամքով կազմում է իր սաների համար առաջին ուսումնական ձեռնարկները՝ «Նախաշավիղը», «Ռուս տեսական և գործնական քերականություն հայերեն լեզվով» դասագիրքը և այլն: Թե՛ դպրոցում, և թե՛ պանսիոնում նրա մոտ սովորում էին հայեր, վրացիներ, թուրքեր:

Դա առաջին ինտերնացիոնալ դպրոցն էր Անդրկովկասի դպրոցական պատմության մեջ, Անդրկովկասի ժողովուրդների մանկավարժության պատմությունը գրողը չի կարող հատկապես չհիշատակել այդ փաստը, որ սերտորեն կապված է Աբովյանի անվան հետ: Թե ինչպիսի լավ հիմքերի վրա է եղել դրված ուսուցողական աշխատանքները Աբովյանի պիսավորած ուսումնական հաստատությունում, այդ մասին է վկայում նրա դպրոցը այցելած ժամանակակիցներից մեկը: «Նա շատ անգամ եմ այցելել այդ դպրոցը և զարմացել պատանիների հաջողությունների վրա:

Տաս-տասչորս տարեկան դեռահաս երեխաները լավ գրում և կարդում էին հայերեն, վրացերեն, թուրքերեն, ռուսերեն, գերմաներեն և՛ ֆրանսերեն... իրենց ուսուցչին նրանք շատ էին սիրում, որովհետև նա շատ էր հոգում ինչպես ուսման հաջողությունների և դաստիարակության մասին, նույնպես և նրանց հանգստության մասին»:

Աբովյանի այդ դպրոցը դառնում էր այն դարձնո-



ցը, որտեղից դուրս պիտի գային անգրկովկասյան ժողովուրդների առաջին լուսավոր ուսուցիչները: Այս հանգամանքն արդեն խոշոր չափով մխիթարում էր մեծ լուսավորչին: 1838 թ. Աբովյանի գրած նամակներից մեկում այդ առթիվ կարդում ենք հետևյալը. «Իմ այժմյան պաշտոնս Թիֆլիսի գավառական դպրոցում արդեն ինձ անսահման մխիթարություն է պատճառում. թեև դա որոշ դժվարությունների հետ է կապված, բայց դա ինձանից անբաժան լինելով թանկագին է դարձել: 200-ի չափ աշակերտներ ամեն օր շրջապատում են ինձ, դրանց սերը, դրանց հարակցությունը բարձրացնում են ինձ ամեն երկրայիններից վեր... քանի որ սրանց մեծագույն մասը իմ ազգակիցներն են, իսկ մյուսները վրացի ու թաթար իմ երկրացիներն են»:

Թիֆլիսում Աբովյանի ծավալած բեղմնավոր աշխատանքը հանգիստ չի տալիս նրա թշնամիներին. վերջիններս շատ շուտով դուրս են բարձրացնում մեծ լուսավորչի դեմ և սկսում անօրինակ հալածանքներ: 1839 թ. Աբովյանը հրավեր էր ստացել Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնը ստանձնող ցանկացողների կոնկուրսին մասնակցելու, այդ հրավերի մասին նրա պաշտոնակիցները շարամոտորեն չեն հայտնում Աբովյանին, մինչդեռ ժամկետը նշված է եղել վեց ամիս միայն: Մեծ ուշացումով հայտնի է դառնում Աբովյանին այդ փաստը և նա այնուամենայնիվ ուղարկում է իր «Նախաշավիղը» կոնկուրսին մասնակցելու համար:

Ակադեմիկոսների խորհուրդը գրախոսելու էր տվել Աբովյանի աշխատանքը Բրոսեին: Ռեակցիոն այդ գիտնականին դուր չեն գալիս Աբովյանի կրքոտ հարձա-

կումները դրաբարի և կղերի դեմ, և նա բացառական կարծիք է հայտնում, որ և հիմք է հանդիսանում մեր-  
ժեշու Աբովյանին նրա հայցածը:

Աբովյանի թշնամիները Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի միջոցով ոգորեցին նրա աշ-  
խարհաբար լեզվի օրինականացման գործին սատարող  
երկի՝ «Նախաշավիղի» հրատարակութեան գործը, աշ-  
խարհաբար լեզվի պրոպագանդիստի դրքի մասին զար-  
պարտիչ գրախոսական գրելով: Աբովյանի ձեռք բերած  
փայլուն հաջողութունները սերունդ կրթելու ընդգամա-  
րում գոնաթափ էին անում նրա թշնամիներին: Թիֆլի-  
սի ալլադդի առաջավոր մտավորականութեան սերն ու  
հարգանքը (մենք նկատի ունենք Զուբալաշվիլուն,  
Ախունդովին) նույնպես վախեցնում էին Աբովյանի գա-  
ղափարական հակառակորդներին՝ կղերին, տգետ վար-  
ժապետներին և սրանց հետ բարեկամական կապի մեջ  
մտած ցարական շինովնիկներին՝ Լուկա Լուկիշիներին:

Կազանի համալսարանում ամբիոն ձեռք բերելու  
խնդրում Աբովյանի շարականների սարքած «գիտական»  
դավադրութունները, «Նախաշավիղի» հրատարակութեան  
գործի խափանման փաստը, պետական գալուցների վե-  
րառեսչի բացառական գնահատականը այն մասին,  
որպես թե Աբովյանը իբրև մանկավարժ չի գոհացնում  
ժամանակի ուսուցչի առաջ դրված պահանջները, այս  
բոլորը ղեկավարող ուժերի հետևողական պայքարի ար-  
տահայտութունն էր Աբովյանի դեմ, նրա ծավալած  
լուսավորական մեծ գործունեության համար: Իր դեմ  
կազմակերպած այս գոռ պայքարում, սակայն Աբովյա-  
նը երբեք չընկրկեց իր հայացքներից, տեսակետներից,  
բայց և նրա զգայուն սիրտն ու հոգին մեծապես հուզ-



վեց, փոթորկվեց, որովհետև նա պարզ տեսնում էր, որ իր մուրազը իրականացնելու առաջին իսկ քայլերը հանդիպում էին շատ ուժեղ դիմադրության: Նրա մուրազը կաշում էր իրականության կարծր ժայռին և փշրվում: Վերոհիշյալ հանգամանքները հարկադրեցին Աբովյանին ակամայից հեռանալ Թիֆլիսից: 1843 թ. հունիսի 11-ին Աբովյանը հրաժարվում է Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի և ուսուցչի պաշտոնից և համաձայն իր ցանկության փոխադրվում է Երևանի գավառական դպրոցը:

Աբովյանի անձնուրաց ջանքերի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում Երևանի գավառական դպրոցը իսկական ուսումնական հաստատության կերպարանք է ստանում: Այստեղ, Երևանում դպրոցի պաշտոնական ժամերից դուրս, Աբովյանը նաև իր տանը մասնավոր դասեր է տվել յուր սաներին: Նվառենք որ Երևանն այն ժամանակ մի խղճուկ գավառական քաղաք էր, ուր չկար մտավոր կյանք, կուլտուրական հաստատություններ, ուսուցիչները հարբեցող, կաշառակեր, սոգեռ, պետական պաշտոնյաները անբարտապան, սանձարձակ իրենց վարքագծով. բնական է, որ Աբովյանի նման մարդու լուսավոր գաղափարների պրոպագանդան այստեղ պարարտ հող չէր կարող ունենալ, իսկ խռընդոտներ նրա հարթելիք ուղու ընթացքում ինչքան ասեք, հանգամանք, որ պայքարի ու ողբերգության նոր էջ բաց արին նրա փոթորկալի կյանքի տարեգրության մեջ: Յուրաքանչյուր մի նոր ռեֆորմ, որ ուզում էր մտցնել Աբովյանը Երևանի գավառական դպրոցում, հանդիպում էր ուժեղ դիմադրության. մի հարբեցող ուսուցչի դպրոցից ազատելու համար սեռեք էր ուժեղ ընդհարումների



մեջ մտնել ո՛չ միայն ռաուցչական խորհրդի հետ, այլև պետական շինովնիկների, որոնք հովանավորի դերումն էին հանդես գալիս: Այսպիսի պայմաններումն էր նոր դպրոցի հիմնադիրը առաջ շարժում չուր մանկավարժական գործունեությունը նաև երեանում: 1848 թ. փետրվարի 1-ին էր, որ Ներսես Աշտարակեցին Աբովյանին Թիֆլիս է հրավիրում սլաշտոնավարելու իր անվան դպրոցում: Ընդունելով Աշտարակեցու հրավիրագիրը, Աբովյանն իսկույն հրաժարական է տալիս երեանի դպրոցների վերատեսչությունը և ազատվում է իր ստանձնած աշխատանքից: Աբովյանին փոխարինելու է գալիս Թիֆլիսի գիմնազիայի վերակացու ումն Տուրկեստանովը: Տակավին չավարտած՝ դպրոցն ընդունելու և հանձնելու աշխատանքները, Աբովյանը 1848 թվի տարիլի 2-ի լուսաբացյին տանից դուրս է գալիս և անվերադարձ դնում:

Աբովյանի «անհայտ բացակայման» լուրը կայծակի արագությունը տարածվում է քաղաքում. հարազատները, ուստիկանությունը մոտ երկու ամիս փնտրում են և սակայն՝ ապարդյուն:

Ի դեպ նրա հոգեկան աշխարհին լավ ծանոթ Ս. Նազարյանը հավանական է համարել այն, «որ մի շար ու խավար վայրկյանի Աբովյանը մահու է տվել չուր անձը»: «Շատ անգամ ուզում եմ գլուխս մահու տալ», մտաբերում ենք Աբովյանի այս խոսքերը: Աբովյանի տանեցիների վկայությամբ, անհայտանալուց երեք օր առաջ, նա առանձնացած էր իր սենյակում, ոչ ոքի հետ չէր խոսում, գրեթե բան չէր ուտում և անդադար ծխում էր, սաստիկ մտառտանջության մեջ ընկած: Ով ծանոթ է Աբովյանի կյանքի և անձի հետ, այն մեծ ող-

բերդության, որ ապրում էր նա իր իղեալների իրականացման արգելակման պատճառով, նա գալիս է այն եզրակացության, որ Աբովյանն ընկավ այդ ուսկիցիայի կողմից:

Հարուստ ու բազմաբովանդակ է խաչատուր Աբովյանի թողած գրական ժառանգությունը: Գրել է նա «Բայաթիներ», առակներ, սրամիտ պատմվածքներ, կազմել դասագրքեր, գրել մանկավարժական վեպ («Տիգրանի պատմությունը»), հեղինակել թատերգություններ, կատարել ստեղծագործական թարգմանություններ կլասիկ գրականություններից, մի խոսքով գրական ամեն տեսակի նմուշներ է տվել նա մեր նորագույն գրականությանը, նրա հետագա զարգացման համար: Բայց Աբովյանը դարագլուխ բաց արեց հայ նոր գրականության մեջ ամենից ավելի «Վերք Հայաստանի» հերոսավեպով: «Վերք Հայաստանին» Աբովյանի ստեղծագործության այն բարձրակետն է, որից այն կողմը չի թևածել նրա հանճարի թափն ու թռիչքը: Իր գրական գործունեության առաջին խակ օրից, որպես մի ժամանակ մեր միջնադարյան տաղերգուները, Աբովյանը հայ գրականությունը երկնքից իջեցրեց երկիր, այսինքն աշխարհականացրեց այն, գրեց աշխարհիկ լեզվով, աշխարհիկ կյանքը պատկերող «սրտի բաների մասին»: Գիր ու գրականությունը ընթերցող լայն մասսաների սեփականությունը դարձնելու նպատակով էր, որ նա հանձն առավ, ինչպես ինքն է ասում, այն ժամանակ «անպատիվ» աշխարհաբարով: հայտնել իր «սրտի հասրաթը» ընթերցողին: «Մախսուս էս լեզվով



գրեցի, որ գեղցին էլ հասկանա, քաղաքացին էլ: Աբովյանը տակավին 19-րդ դարի 30-ական թվականներին այն առաջավոր միտքն է հայտնել, որ գիր ու գրականությունը ընթերցող լայն մասսաների՝ «հարյուր հազարների» սեփականությունը պիտի լինի, և ոչ «տասը ընտրյալի»: Անցյալ դարի խորքից Աբովյանը այսօր էլ ձեռք է մեկնում մեզ, և մենք սիրով սեղմում ենք նրա ձեռքը: Ամենին հասկանալի աշխարհաբար լեզվին՝ քաղաքացիական իրավունք տալու նպատակով էր, որ նա իր առաջին դասագիրքը՝ «Նախաշավիղը» կազմեց այդ լեզվով. այդ լեզվով քնարերգեց նա նաև իր հույզերը, իր «Բայաթիները». այդ լեզվով գրեց նա «Պարսպ վախտի խաղալիք»-ը և յուր առականերում ծաղրեց ու ծանակեց այն ամենն, որ արգելակում էր լուսավոր գաղափարների մուտքը ժողովրդի մեջ: Վերջապես այդ նոր լեզվով էր, որ նա, ինչպես Թումանյանն է ասում, պատմեց իր ազնաատեսի աչքով տեսածը. «Թե ինչ անասելի նեղություն էր քաշում մեր ազգը էն ժամանակ պարսից տերության ձեռքին ու ազգի էս ծանր վիճակը վերք դարձավ, կպավ սրտին... ահա էս խորը վերքը, իր աչքի տեսած տըրտունջքն ու տառապանքը, կոխվն ու քաջությունը հրեղեն լեզվով նա պատմեց մի գրքի մեջ, անունը դրեց «Վերք Հայաստանի»: Մեր ազգի սիրած «Վերք Հայաստանին»<sup>1</sup>: Թրդարև «Վերք Հայաստանին» մեր ժողովրդի ամենասիրած վեպն է, նրա տառապանքների, նրա պայքարի հերոսավեպը: Տասնամյակներ շարունակ «Վերք Հայաս-

<sup>1</sup>) «Թումանյանը քննողատ», Պետհրատ, Երևան, 1939 թ., էջ 203.



«անին» ներշնչարարան է եղել հայ ժողովրդի համար: Մեր բոլոր առաջավոր դրողները՝ Նալբանդյանը, Թումանյանը, Պոռոջյանը, Աղայանը, Իսահակյանը ներշնչվել են «Վերք Հայաստանի»-ով: Մեր ձեռքի տակ եղած փաստերը թույլ են տալիս ասելու, որ Աբովյանի այդ վեպի որոշ կողմերով ներշնչվել է նաև հայրենական պատերազմի ռազմի դաշտերում գերմանական ֆաշիզմի դեմ կռվող հայ մարտիկը ևս: «Վերքը» որպես հայրենաբաղձ ոգու զեղմունք հուզել է նաև իր ժամանակ մեծ ռևոլյուցիոներ Ստեփան Շահումյանին. իր նամակներից մեկում, խոսելով «Վերքի» նոր հրատարակության մասին, Շահումյանը գրել է հետևյալը. «Բայց ինչո՞ւ աչքս երկար կանգ առա այս գրքի վրա, երևի, որովհետև այս վերջին օրերս շատ եմ ներշնչվում նրանով»:

«Վերք Հայաստանին» ամենից առաջ նրա համար է սիրելի մեր ժողովրդին, ասում է Թումանյանը, որ հանդիսանում է հրաթափ բերանը ամբողջ ազգի բողոքի, ընդդեմ ասիական կոպիտ ու խավար բռնակալության, հարազատ թարգման հայի պատմական տրամադրության, մի ցանկություն՝ տեսնել ռուսին իրենց գլխին տեր պատմությունը էդ անմոռանալի ժամանակի: Ահա էդ համազգային տենչանքի ու իմաստության բերանն է հանդիսանում մեր աշխարհքում «Վերք Հայաստանին», մեծ տանջանքի, մեծ պատերազմի ու մեծ հույսերի ժամանակի՝ վեպը»<sup>1</sup>: Աբովյանի թողած գրական հարուստ ժառանգությունը, և առաջին հերթին նրա «Վերք Հայաստանին»:

<sup>1</sup> «Երևանի կռիվը և Ն. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն իբրև պատմություն»: Զեռագիր ֆրագմենտալ աշխատություն:

տանին», յուր մի քանի հետաքրքրական կողմերով հատուկ ուշադրության արժանի երկ է նաև մեզ համար։ Արդ՝

«Նայենք ինչեր գրված կան,  
Հո՛ն հրդեհ կա, ո՛չ մատյան»։

Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մասին խոսելիս չի կարելի դանց առնել նրա առաջաբանը, մտնալանդ, որ դա սովորական իմաստով առաջաբան չէ և կամ դրան փոխարինող երկու խոսք։

«Վերքի» առաջաբանը բեղմնավորում է ընթերցողի միտքը, համակում նրան զգացմունքներով։ Յուր ժանրային առանձնահատկությամբ «Վերքի» առաջաբանը շատ նման է մի այնպիսի հիշատակարանի, որի հեղինակը տարված ինքն իր մտքերի և զգացմունքների հետ, կարծեք մենախոսելիս լինի և կամ յուր սրտակից մտերմի առաջ նստած բաց է անում նրան իր «էրված փոթոթված» սիրտն ու պատմում է յուր ապրածն ու զգացածը։ «Վերքի» առաջաբանը ստեղծագործական էքստազի մի ցայտուն արտահայտություն է, որն իր տեսակում ունիկում է մեր գրականության մեջ։ Աբովյանի այս վեպի առաջաբանը ուշադրավ է նրանով, որ ահագին լույս է սփռում հեղինակի կյանքի ու գրական գործերի վրա։

Աբովյանի մտորումները, նրա հայացքները, քաղաքական ու գրական նպատակադրումները տրված են այստեղ պոետիկական ստեղծագործությանը հատուկ հնարանքներով։ Եվ հիրավի, «Վերքի» առաջաբանի առաջին իսկ տողերը սկսվում են գեղարվեստական ստեղծագործությանը ցնորոշ պատկեր համեմատություններով։ «Կրեսոս թագավորն լիդացվոց՝ երբ Կյուրոս բոլոր աշ-

խարհքի տիրեց, ու նրա երկիրն էլ առավ, կռվումը ղոնշում, սիրելի; բարեկամ, զորապետ՝ նրան թողեց ու էն անդին մարդարտի ու ջաշահրե ամարաթներում մեծացած՝ Կրեսոսը, որ իրանից բախտավոր աշխարհքի երեսին էլ մարդ չէ՛ր համարում, ընկած մեկ պարսիկ զորականի առաջ, շունչը բերնին հասած՝ փախչում էր, որ իր գլուխն էլա պրծացնի, պարսիկը ետևիցը հասավ: Սուրը գլխին պսպղաց, աչքերը սևացավ, դեռ գլուխը չտված, հենց իմացավ՝ թե մահն էն ա հոգին առավ, հենց ուզում էր, որ իր թուրը իր սիրտը կոխի, որ թըշեամին իրան շոպանի, զորականը, որ թուրը չի՛ բարձրացրեց, թագավորի միամուր որդին, սր հոր մահը չըտեսավ առաջին, 20 տարվա փակ լեզուն՝ իսկույն կապը կտրեց, բաց էլավ, ու 20 տարվա լուռ սիրտը՝ իր առաջին ձենը տվեց. «Անորե՛ն՝ էդ ո՞ւմ ես սպանում, քաշի՛ր թուրդ եդ, չե՞ս տեսնում՝ որ առաջիդ Կրեսոս ա, աշխարհքի տե՛րն ա:

Զորականի ձեռները թուլացան, թագավորն իր գլուխն ազատեց, 20 տարեկան լալ (մունջ) որդին իր հորը պրծացրեց<sup>1)</sup>: Պարսից զորականի մերկացրած սրի առաջից փախչող մահապարտ Կրեսոսի այս հոյակապ պատկերը ինքնանպատակ չի մնում Աբովյանի մոտ:

Այդ պատկերը նա զուգադրում է հայ աշխարհաբար լեզվի նման համապարտ միճակին: «Հայոց լեզուն առաջից փախչում էր Կրեսոսի նման», ասում է Աբովյանը: Եվ ինչպես որ Կրեսոսին մահվան դատաստանից ազատողը նրա մունջ որդին է լինում, որ փշրում է

1) «Կերբ Հայաստանի», Պետհրատ, Երևան, 1939 թ., էջ 61.



«Բնության դրած զնշիլը», այսպես էլ Աբովյանի 30 տարվա փակ բերանը Աղասին բաց արնց: Եվ այդ տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Աբովյանը բաց աչքով տեսավ ո՛չ միայն հայ ժողովրդի գլխին փայլատակող պարսկական յաթաղանը, այլ և լուսավոր գաղափարների մուտքը ժողովրդի առաջ արգելակող եկեղեցական գրականության վտանգը: Այդ ժամանակ էր, որ բացվեց Աբովյանի հրեղեն լեզուն և քննադատական կրակի տակ առավ մասսաների միտքը «բղխողող» գրաբարը: Ճիշտ է նկատում հեղինակը, որ մինչ իր հանդես գալը «մեկ մարդ էլ ա չի դուրս եկել, որ մեկ սրտի բան գրի, ինչ կա՝ եկեղեցու վրա ա, աստծու ու սրբերի»: Եվ որովհետև այդպիսի մեկը չի եղել, որ նոր գործի բահվիրա դառնար, ուստի Աբովյանը իր վրա է առնում այդ դժվարին գործը: Նրա «Վերքի» առաջաբանը այդ իմաստով, աշխարհիկ լեզվի և գրականության զարգացմանը սատարող, և մեր գրականության գալիք օրվա ուղին նշող առաջին գրական մանիֆեստն էր դառնում:

Աբովյանը յուր «Վերք»-ի առաջաբանում ջարդ ու փշուր էր անում «Պղնձե քաղաքի պատմությունը»՝ նայիվ այդ գիրքը ու եկեղեցական գրականությունը:

Աբովյանը պահանջում էր գրականությունից աշխարհիկ կյանք պատկերող «սրտի բաներ»: Հայրենասիրության, հումանիզմի գաղափարներ սերմանել, բայց երբեք աստծու ու սրբերի վրա գրված մտացածին ժամագրքեր: Աբովյանը իր գրական մանիֆեստ-առաջաբանում առաջադրված խնդիրների առաջին գործնական կիրառողը եղավ, հրապարակելով իր «Վերք Հայաստանին», «Պարապ վախտի խաղալիք»-ը և այլ երկերը: Որպես մեծ լուսավորիչ Աբովյանը թե՛ իր վեպում,

— Լե թե՛ մանավանդ նրա առաջաբանում առաջ էր քաշում  
և այն թեզը, որ հայ ժողովուրդը, իբրև աշխարհի հնա-  
գույն ժողովուրդներից մեկը, պետք է որ 19-րդ մեծա-  
դործ դարում ևս քայլի կուլտուրական ու լուսավոր ազ-  
գերի հետ կողք-կողքի պրոգրեսի ճանապարհով: Դըժ-  
վարին թի գործ էր այդ, կղերական դիտումների հան-  
ցանքով, ճամփից դուրս եկած ժողովրդին նոր ու ճիշտ  
ուղու մեջ դնելը:

Իր դրական և մանկավարժական առօրյա պրակ-  
տիկայում Աբովյանը զգաց այդ բանի դժվարությունը,  
բայց և զինվորագրվեց այդ գործին: Կուլտուրական  
ֆրոնտի անխոնջ մշակը իր առօրյա աշխատանքում  
տեսնում էր, որ յուր աշակերտները խորշում էին գրա-  
բար լեզվից, և նույնիսկ կամովին հրաժարվում այդ  
լեզվով գոյություն ունեցող գրականությունը կարդա-  
լուց, որոնց մեջ, արդարև նկատում է նա, «սրտի բան էլ  
չկար ու չկար»: Իր սաների կողմից գրաբարի թերազնա-  
հատումը Աբովյանը արդարացնում էր ասելով. «Հենց  
բերնիցդ էլ ոսկի վեր ածի՛ր, ո՞ւմ պետք է ասես: Ամեն  
մարդ իր սրտի խարջ բան կուզի: Քո զաբլու փլամն ինձ  
ի՞նչ օգուտ, որ ես չե՛մ սիրում»:

Գրաբարի հարուցած դժվարությունները չէին կա-  
րող հաղթահարել նրա սաներն անգամ, էլ ո՞ւր մնաց  
անուա մասսան: Այս ամենը դժվարացնում են Աբովյա-  
նի սկսած խոշոր գործի կենսագործումը, և նա կանգնում  
էր մեծ փորձությունների առաջ: Խոտոր էր ուղին, ան-  
խուսափելի էր և երբեմ հուսահատությունը: «Սիրտս  
ուզում էր, պատուի, որ էս երեսեքանց ձեռքն էլ՝ ի՞նչ  
հայի գիրք տալիս էի, խոսքը գրաբար լեզվով գրված  
գրքերի մասին է (Հ. Ղ.), չէին հասկանում: Ռուսի, նե-

մեցի, ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարգում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին՝ էնպես բաները դիր գալիս: Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ՝ որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվըներումը նրանք կարգում էին հրեելի մարդկանց գործերը, նրանց արածները ու ասածները»<sup>1</sup>: Ուրեմն ի՞նչ անել, որ սեր զարթնեցնել մանուկների մեջ մայրենի դրահանության նկատմամբ: «Ա՛խ, սրտի թառանչով բացականչում է Աբովյանը, լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ:

Գանձ շունի, որ գործով ցույց տալի ուղածս, անունս մեծ չէր, որ ասածս տեղ հասնի, մեր պրքերն էլ գրաբար, մեր նոր լեզուն էլ անպատիվ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի...»<sup>2</sup>: Ընթերցողին շնչահեղձ անող Աբովյանի հուսահատական դրության շափը ներկայացնող այս աղեխարշ տողերը խզվում են՝ դադար առնում, ինչպես ինքն է հավաստում առաջաբանում, այն պահին, երբ ստեղծագործական կրակը ջանն է առնում, երբ նա գամում է իրեն գրասեղանին, երբ սրտի հավելվածից սկսում է խոսել բերանը: Գրաբարը, որ մինչ այդ փակել, «բղխողել» էր Աբովյանի միտքը, հիմա տեղի է տալիս, և ուրեմն բացվում է նրա հրեղեն լեզուն: Այդ լեզուն «Վերք Հայաստանի»-ն էր: Առաջաբանի ստորև բերված տողերում ամբողջությամբ պարզվում է մեզ համար նաև «Վերք»-ի ստեղծագործական ողջ պատմությունը. «Սահաթի տասն էր առավոտի էլ հաց, կերակուր միտքս շեկան: Ճանճը առաջովս անց կենա-

<sup>1</sup> «Վերք Հայաստանի», Պետհրատ, Երևան 1939 թ., էջ 7.

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 6



լիս, ուզում էի, սպանեմ, էնպես էի վառվել... գիշեր-  
վան մինչև սհաթի հինգը ո՛չ հացի մտիկ արի, ո՛չ շայի,  
չիբուխն էր իմ կերակուրը, դրիլը իմ հացը: Տանըցոց  
խնդրելուն, նեղանալուն, խռովելուն էլ չէի մտիկ ա-  
նում: Երեսուն թաբաղեն էն ա լցվելով էր, որ բնությու-  
նը իր պարտքը սլահանջեց, աչքերս գնաց...»<sup>1</sup>: Դա մի  
շտեսնված անգագրոն ստեղծագործական աշխատանք է  
եղել, որ կատարել է Աբովյանը «Վերք»-ը գրելիս:  
«Ստեղծագործությունը հիշողության աշխատանքի լար-  
ման աստիճանն է». մտաբերում ենք Մաքսիմ Գորկու  
այս խոսքերը: Մի փոքր կողմնակի խանգարիչ հանգա-  
մանք կարող է կտրել հեղինակի ստեղծագործական  
մտքի թելը: Այդ մաքով է ասել Աբովյանը թե՛ «Ճանճը  
առաջովս անց կենալիս, ուզում էի, սպանեմ, էնպես էի  
վառվել»:

Ինչպես տեսնում եք առաջաբանի մեջ ասվածից,  
«Վերք»-ը գրված է շնչով: «Վերք»-ը գրելուց, վերջացնե-  
լուց հետո, Աբովյանը արվեստագետի աչք է ածել իր  
երկի վրա, և ներշնչման պահին թույլ տված հնարավոր  
սայթաքումները շտկել, մշակել, ավելացրել, կամ հա-  
յավել է առանձին մասերը: Այդ են վկայում Երևանի  
Պետական Գրական Թանգարանում գտնվող Աբովյանի  
«Վերք»-ի ձեռագիր առաջին և երկրորդ տարբերակները:  
«Վերք Հայաստանի» վեպի առաջաբանի մեջ մի ուշա-  
գրավ խոստովանություն էլ է արել Աբովյանը, որ ինք-  
նին շատ արժեքավոր է մեզ համար: Աբովյանը ցույց է  
տվել, թե ի՞նչքան մեծ նշանակություն ունի գրողի հա-  
մար լսել բարեկամ մարդկանց խրախուսիչ խոսքերը,  
այդ խոսքերն ուղղակի ստեղծագործական լիցք են տվել

<sup>1</sup> «Վերք Հայաստանի», ԼՂ 10, հրատ. 1939 թ..

գրողին: «Մեկ երես բան դեռ չէի գրել, որ իմ մանկա-  
կան սիրելի բարեկամ ու ազնիվ հայազգի պարոն դոք-  
տոր Աղաֆոն Սմբատյանը ներս մտավ: Ուզում էի՝  
թուղթս ծածկեմ, էլ չկարացի: Ինձ համար աստիճան էր  
ներան էն սահաթին դրկել՝ նրա ջա՛նին մեռնիմ: Զոռ ա-  
րեց՝ որ կարդամ, բարեկամիցը ի՞նչ պետք է թաքցրած:  
Սիրտս դողում էր կարդալիս, մտքումս ասում էի՝ թե  
հենց հմիկ որդե որ ա, գլուխը կպտտի, ունքերը կկիտի  
մյուսների նման ու իմ ակամախուժյան վրա մտքումս էլ  
ա հո կծիծաղի, որ երեսիս շասի: Բայց փիսը ես էի, որ  
նրա ազնվական հոգին դեռ լավ չէի ճանաչել: Վերջաց-  
նելիս՝ որ հենց էն ա, թուրն եկել էր, ոսկոռին դեմ  
ս.ռել, որ շասեց «թե էդպես կշարունակեք, շատ հիանա-  
լի բան կդառնա», ուզում էի վրա թռչիմ, բերանը, էն  
քաղցր բերանը համբուրեմ»<sup>1</sup>:

Տակավին չի պարզված այլ բարեկամ մարդկանց  
հետ նաև Աբովյանի մանկության սիրելի բարեկամ  
Աղաֆոն Սմբատյանի ով լինելը, սակայն ինչպես տես-  
նում եք, առաջաբանի այս տողերից, Աբովյանը խավարի  
թագավորության դեմ պայքարելիս, շրջապատված չէր  
ամենուրեք մենակ թշնամիներով, ինչպես հաճախ սի-  
րում են ասել նրա մասին գրողները: «Վերք»-ի առաջա-  
բանի մեջ բացի հիշյալ հարցերից հեղինակը՝ առաջ է  
քաշել նաև ժողովրդական բանահյուսության հավաքա-  
դրման անհրաժեշտության խնդիրը, աշխարհիկ գիր ու  
գրականության ստեղծման հարցը և այլն: Ի դեպ Աբո-  
վյանն իր առաջաբանում առաջադրած բոլոր այս հրա-  
տապ խնդիրների առաջին դործնական կիրառողը եղավ  
յուր հրապարակած «Վերք Հայաստանի» վեպով:

<sup>1</sup> Անդ, էջ 9 - 10.

Խաչատուր Աբովյանը իր «Վերք Հայաստանի» վեպի նյութը առել է 1826—1827 թվականների ռուս պարսկական պատերազմի ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցող պատմական այդ մեծ դեպքերից: Ինչպես կտեսնենք, այդ դեպքերն ու դեմքերը զարմանալի ճշմարտացի և միաժամանակ մեծ գեղարվեստականությամբ են պատկերված Աբովյանի վեպում: 1826 թվին ծայր առած ռուս պարսկական պատերազմի առիթը՝ պարսից թաղաժառանգ Աբբաս Միրզան սահմանների ճշտումը դարձրեց, որ երկար ժամանակ վեճի առարկա էր երկու պետության կողմից, պատերազմի բուն պատճառը, սակայն հետևյալն էր:

1813 թվին ռուս պարսկական պատերազմից հետո, որ վերջացել էր ռուսների հաղթանակով, Պարսկաստանը իբրև պարսվող կողմ կնքել էր Գյուլիստանի հայտնի դաշնագրությունը, որի համաձայն Պարսկաստանը Ռուսաստանին պետք է հանձներ և հանձնել էր Ղարաբաղի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Գերբենդի և այլ խանությունները: Սակայն այդ պայմանագիրը ստորագրելու ժամանակվանից իսկ Պարսկաստանը մտածում էր նոր պատերազմի մասին, նպատակ ունենալով տանուլ տված երկրամասերը ետ առնելու Ռուսաստանից: Թաղցնելու համար իրենց այդ մտադրությունը պարսիկները շարունակում էին կեղծ բարեկամական պատգամներ հղել Ռուսաստանին: Իսկ երբ պարսից թագաժառանգ Աբբաս Միրզան անգլիացիներից և կովկասյան մահմեդական խաներից ուղղմական օժանդակություն ստացավ, նոր միայն հանդգնեց լուրջ պատրաստություն



տեսնել պատերազմ սկսելու Ռուսաստանի դեմ: Ռուսաստանից իհարկե դադարն էր չմնաց Պարսկաստանի այդ մտադրությունը: Ուստի ռուսական հրամանատարությունը աստիճանաբար անհրաժեշտ քանակությամբ զորքեր սկսեց կուտակել Կովկասում: Ռուսական բանակների առաջխաղացումը դեպի արևելյան այս սահմանները բանաստեղծորեն այսպես է պատկերվել Լերմոնտովի գրչի տակ:

Идут все полки могучи,  
Шумны, как поток...  
Страшно медленные как тучи,  
Прямо на Восток.

Ռուսաստանից եկած այդ զորքերը կազմ ու պատրաստ պարսկական սահմաններում էին արդեն գտնվում, երբ 1826 թվի հուլիսի 16-ին, վաղ առավոտյան, առանց պատերազմ հայտարարելու, հանկարծ Պարսկաստանը ուխտադրուժ հարձակման անցավ ռուսական սահմանապահ զորամասերի վրա, առաջին հարվածն ուղղելով Խըլ-Ղարաքիլիսայի և Համզաչիմանի վրա. առաջինի վրա հարձակվեց Հասան խանը, իսկ երկրորդի՝ Նազիր խանը 1000 ձիավորով: Այնուհետև ամեն կողմից Սարգարը, Աբրահա Միրզան, մյուս խաները զարգացնելով իրենց գործողությունները, ընդհանուր հարձակման են անցնում մի քանի ճակատներով: Պատերազմը տևում է մինչև 1827 թ.: Աբրահա Միրզան շարաշար սխալվում էր իր հարևանների դեմ սկսած պատերազմի հաշիվների մեջ: Անդլիացիների և կովկասյան խաների ցույց տված օգնությունն էլ ցանկացած հաղթանակը շապահովեց:

Պատերազմը վերջանում է Ռուսաստանի հաղթութ-  
յամբ: Վերջին ճակատամարտը Երևանի բերդի մա-  
սուլցներում էր տեղի ունեցել, որ վճռել էր խանական  
Պարսկաստանի տիրապետության տակ հեծող հայերի  
ֆիզիկական ապահովության բխտը: Այսպիսով 1827  
թ. Ռուսաստանին են անցնում Երևանի, Նախիջևանի  
խանությունները և ամբողջ Արարատյան երկիրը: 1826—  
1827 թվերի ռուս պարսկական պատերազմի այս ան-  
ցուղարձեքից 13—14 տարի անց է, որ դրեց Աբով-  
յանը իր վեպը՝ «Վերք Հայաստանին», և ուրեմն հե-  
ղինակը ժամանակակից է եղել այդ դեպքերին, ավելին,  
նա: Ենթարկվել է պարսիկների կողմից հայերին հարու-  
ցած արհամիրքներին:

1826 թվին, երբ Աբովյանը Թիֆլիսից էջմիածին էր  
մեկնում Եփրեմ կաթողիկոսին տեսնելու, այդ ժամա-  
նակ է ահա, որ նա ընկնում է պատերազմի բովի մեջ.  
«Էրկու օրից հետո հենց մտա Ղարաքիլիսեն՝ Խղարա-  
քիլիսու եսիրներն էկան», դրում է Աբովյանն իր «Վերք»-  
ում (խոսքը հայ դպրականների մասին է, Հ.Ղ.):

Այդ կռիվների ժամանակ է, որ սովամահ է եղել  
նաև Աբովյանի եղբայրը: Այսպիսով Աբովյանը Եղիշեի  
նման ականատեսի աչքով է գրել իր վեպը, պարսիկնե-  
րի կողմից հայերին հասցրած բյուր հարվածներին ևն-  
թարկվողի գրչով:

Վեպի գլխավոր հերոսը՝ Աղասին, եթե կարելի է  
ասել, առաջին հայ պարտիզանի կերպարն է մեր դե-  
ղարվեստական գրականության մեջ: Աղասին, որին  
անձամբ ծանոթ է եղել Աբովյանը, ռուս-պարսկական  
պատերազմի տարիներին մարտիրոսված հայ հերոսնե-  
րից մեկն էր, որ իր կյանքը ի սպաս է գրել

յուր ժողովրդի փրկութեան, բարորութեան գործին, և այդ իսկ պատճառով արժանի դարձել Աբովյանի գրչի փառաբանութեանը: «Դեռ վարժատան աշակերտ էի,—գրում է Աբովյանն իր վեպում, ու ինչպես էսօր կենդանի է մտքոմս՝ Աղասին ինչպես մտաւ Թիֆլիզ: Երեւի իշխանի որդի չէր, որ նրան մեծ փառքով ներս բերին, բայց ով նրա արածը իմացել էր, ուզում էր ոտները ջուր անի՝ խմի: Մեկ թղթի միջոց ծալած իրա ոսկորները քսան անգամ հենց ինձ ա ցույց տվել, որը որ զանազան տեղ կռններումը կոտրել՝ հանել էին»<sup>1</sup>:

Աբովյանի այս հերոսը, ինչպես հեղինակն է ասում, երեւի իշխանի որդի չէր, այլ ժողովրդի ծոցից ելած նրա շահերի, նրա բարորութեան համար իր գլուխը ետ դրած մի անկաշառ հայրենասեր էր: «Մեկին մեկ փորձանք դիպչելիս, կամ մեկ դարդ ունենալիս, նա (Աղասին Հ. Ղ.) իր գլուխը եղ էր դնում, նրա մուրադին հասնում: Բերնի թիքեն հանում էր, ուրիշին ուտացնում... Որը էր նրա դուռը գալիս, սուփրեն էր բաց անում... ու միող շուներ՝ որ մշակ բռնի՝ ինքն առանց խնդրելու նրա բանը անում»<sup>2</sup>: Ահա այս հատկությունների համար է, որ «Սաղ գեղը է՛նքան էր նրա սիրովը վառվել, որ մինչև նրա վրա խաղ էլ էին հանել, իրանք ասում, երեսեքանցը սովորեցնում»: Անձնագոհությունն ու ժողովրդասիրությունը մղում են Աղասուն զորավիգ կանգնել նաև «ղզբաշի անիրաւ», չար կրնկի տակ հեծող ժողովրդի դատը պաշտպանելու: Նկատենք այն, որ թեև Աբովյանը իր վեպը պատմական երկ է համարում, բայց նա հնոտի ու մեռած պատմական անցյալից չի առնում

<sup>1</sup> «Վերք հայաստանի», էջ 204, հրատ. 1939 թ.

<sup>2</sup> Անգ, էջ 24.



ցուր նշույթը, այլ իր ապրած ժամանակաշրջանում տեղի  
ունեցող մեծ իրադրություններից: Հայ ժողովրդի ինք-  
նագիտակցության զարթոնքի, նրա ազդային ազատա-  
պրական շարժման մատին է մեր խոսքը: Աբովյանի վե-  
պոմ մենք չենք տեսնում եւասիրական շահերով սուաջ-  
նորդվող թագավորների ու իշխանների, ինչպես այդ  
հատուկ է որոշ եվրոպական տիպի պատմական վեպե-  
րին: «Վերք Հայաստանի»-ում հանդես եկող հերոսները՝  
Աղասին, Մուսան, Կարոն, օտար տիրանների կողմից  
ստնահարված հայ ժողովրդի շահերի արտահայտիչներն  
ու պաշտպաններն են: Հանգամանք, որ Աբովյանի դեմո-  
կրատիկ աշխարհայացքի պարզաբանման տեսակետից  
խիստ ուշագրավ է: Եվ վերջապես վեպի գլխավոր հերո-  
սը, Աղասին հայ ժողովրդի ոգորումների, նրա ձգտում-  
ների ռեալ արտահայտիչն է հանդիսանում վեպում:  
Ճիշտ է նկատել Թումանյանը, որ «Աղասին հայ ժողո-  
վրդի բացարձակ ու բարձր բողոքն էր պարսից կառա-  
վարության դեմ»: Հանգամանք, որ մտածել է տալիս  
մեզ ամբողջովին ռոմանտիկ կերպար չհամարելու  
Աղասուն:

Աղասու սխրություններով լի կյանքի հերոսավե-  
պը Աբովյանի «Վերք»-ում սկսվում է այնտեղից, երբ  
Ֆրեանի Սարգարի հրամանով նրա ֆառաշները գնում  
են Քանաքեռ առևանգելու Աղասու համագյուղացինե-  
րից մեկի գեղեցիկ աղջկանը՝ Թագուհուն: Իդեալ Թա-  
գուհու գեղարվեստական դիմանկարը գծելիս Աբովյա-  
նը նրան դարձրել է մի կերպար, որն իր մեջ ամփոփում  
է հայ կնոջ բոլոր դրական կողմերը, նրա արտաքին և

ներքին բարեմասնությունները: «Երևանու ալվան աղջկերանց վայելչությունը, ազնվությունը, առաքինությունը, սիրունությունը միտք ունիմ էնպես գովելու, թեկուզ, որ աշխարհք էլ չմտնիմ, ես գիտեմ, որ նրանք սլարկեշտ են և ամոթխած»<sup>1</sup>: Այսպիսով «Էներք»-ի մեջ ռոմանտիկական գույներով պատկերված Թագուհին իրականացումն է Աբովյանի այդ նպատակադրման, որ սակայն, ինչպես տեսնում ենք, ռեալ սկզբնաղբյուրից է բխում: Վեպի հերոս նահապետական հասկացողության տեր Աղասին, որի համար օճախի սրբության սիմվոլ էր հայ կինը, ցասումով է լցվում, երբ լուր է առնում, որ ֆառաշները եկել են գյուղ Թագուհուն առևանգելու, Սարգարի կրքերի զոհը դարձնելու համար: Հասնելով միջադեպի վայրը Աղասին տեսնում է տեղը սպանում է ֆառաշներից մի քանիսին: Թագուհու առևանգման միջադեպը վիպող հեղինակը գեղարվեստորեն ցույց է տվել, որ ծա'նր, խիստ ծա'նր էր պարսկական բռնապետության լուծը տանելը. «Աղջիկ ասես՝ քաշում էին, տղա ասես տանում, շատ անգամ թուրքացնում... շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում: Ղուշը գլխներովն անցկենալիս վեր էին քցում, թեփում, պլոկում. մարդ չէր կարում տեղիցը հռա»: Ժողովրդի այս դառն վիճակն էր, որ ստիպեց ամեն մի բռնապետված հայի համար յուր գլուխը վեր դրած Աղասուն, իր քաջ ընկերների՝ Մուսայի, Կարոյի և ուրիշների հետ ազատագրական ընդոստ պայքարի ելնելու պարսկական բռնապետության դեմ: Ընդվզման ու պայքարի ոգին չի մեղել հայի մեջ, թեև նա հեծում է անիծյալ, «հարամի զզլբաշու» տիրապետության ներքո:

<sup>1</sup> Տե՛ս՝ Ներսես Տեր-Կորապետյան—«ԷՆ. Աբովյան»:

Այս միտքն է զարգացրել Աբովյանը յուր բովանդակ վեպում: Եվ որպես ապացույց այդ բանի, կրակված հայրենասիրությամբ, վեպում առաջ է տանում հեղինակը Աղասու և նրա ընկերների պայքարի հերոսական զրվագները: Եվ հիրավի «Վերք»-ը կարգալուծ մենք վերք ու ողբ չենք զգում միայն, այլ սակայն գերազանցապես վառվում ենք հայրենասիրությամբ, վրեժխնդրությամբ, և ուրեմն «Վերք»-ը մեր ժողովրդի, կամ Աբովյանի, «Վշտի ավետարանը» չէ, ինչպես սխալմամբ կարծում են Աբովյանի մասին գրողներից ոմանք: Աղասու և նրա մյուս ընկեր պարտիզանների սխրագործությունները Ապարանի, Լոռվա, Խըլղարա-քիլիսայի, բայց մանավանդ Անիի ավերակների վրա, ընդդեմ խանական պարսկաստանի, դրա լավագույն ապացույցն է: Վեպի ամենահետաքրքրական էջերն են կազմում Անիի ավերակների վրա Աղասու կատարած սխրագործությունների զրվագները: Այստեղ հեղինակի ներքին պաթոսը, որով համակված առաջ է տանում նա իր վեպի ֆաբուլան, հասնում է իր գագաթնակետին: Այստեղ ավելի բուռն ու հախուռն է հեղինակի հայրենասիրական շունչը: «Շունչդ տուր, հոգիդ, բայց հայրենիքդ մի տար թշնամյաց»: Այս գաղափարն ավելի է ընդգծված վեպի ավյալ էջերում, և ընթերցողը շունչ պահած կլանում է «Վերքի» էջերը: Անիի ավերակների մոտ Հասան Խանի հրոսակախմբերի վրատարած հաղթանակից հետո, Աղասին ազատում է գերիվարած հայ գաղթականներին ու արժանանում նրանց օրհներթին:

Ընկած լինելով այնպիսի աշխարհակալ պետությունների քառուղու վրա, ինչպիսիք խանական Պարս-



Կատանն էր, և ֆեոդալական Թուրքիան, Աբովյանի հերոսը իր հայացքը հառում է դեպի Ռուսաստանը։ Բնականաբար ուսասիրությունը, որպես լայտ մոտիվ, պետք է հնչեր, և իրոք հնչում է։ Աբովյանի վեպում սկզբից մինչև վերջը։ Այդ սերը սակայն միայն հեղինակի ուսաների նկատմամբ տածած անձնական համակրանքից չէր բխում, այլ նաև հայ ժողովրդի սիրո և հարգանքի արդյունք է։ Այդ հանգամանքը շեշտելու համար է, որ Աբովյանը ժողովրդի մարդկանց բերանով է արտահայտում նրանց ուսաների նկատմամբ ունեցած սերը։ «Վերք»-ի մեջ հայ գյուղացին, հայ մարդը, թե՛ տխրության, և թե՛ քեֆի ժամին իր առաջին բաժակը բարձրացնելիս ուսա տերություն կենացն է խմում, որպես իր փրկարարի։ «Տե՛ր աստված,—ասում է վեպում հանդես եկող գյուղացին,—դու մեր ուսա թագավորի սիրտը ռահմ քցես, որ դա, մեզ աղատի՛, ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք... ընչանք մեռնին ո՛չ, որ մեկ օր էլ էսպես ելով, գյուղնով ուսի ձեռի տակին նստինք քեֆ անենք»<sup>1</sup>։ Ահա հայ գյուղացու, հայ մարդու իղձը։ «Օրհնվի էն սհաթը,—կարդում ենք մի այլ տեղ,—որ ուսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ, ու Ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց։ Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է դիշեր ցերեկ մեր քաշած օրերը մտքըներս քերենք ու ուսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք...»։ Ինչպես տեսնում ենք հայ ժողովուրդը ցնծությանմբ էր սպասում ուսաներին, գրկաբաց ընդունելու իրենց երկիրը, իսկ Եվրոպայի առաջխաղացումը դեպի

<sup>1</sup> «Վերք Հայաստանի», էջ 43, հրատ. 1930 թ.

Սմերիկա նույն «Վերք»-ի մեջ աշխարհակործան երե-  
վույթ էր համարում Աբովյանը: «Քսան տարու մի-  
ջում,—գրում է նա,—լուսավորչալ, քրիստոնյա, խաչա-  
պաշտ եմբողացոց ոտը՝ սղորմելի Սմերիկա, էնպես  
քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ-  
վեց միլիոն ազգերիցը՝ էսօր հազար հոգի էլ չեն մնա-  
ցել...»<sup>1</sup>: Այն հանգամանքը, որ Աղասին հայ ժողո-  
վրդի փրկության բախտը կապում է Ռուսաստանի  
հետ և ռուս ժողովրդի ռեալ ուժերի վրա է հիմնվում, դա  
ևս ռեալիստական մի գիծ է Աղասու գործունեության  
մեջ: Աղասու ռուսասիրությունը, սակայն շահադիտա-  
կան նպատակներից չի բխում,—ասում է Աբովյանը.  
«Հայոց ազգը ոչ թե փողի կամ դահի խաթեր ա ռուսի  
տերության անունը պաշտում, այլ թե իր սրտի ուխտն  
է ուզում կատարի, որ իր հավատն ու ազգը պահպա-  
նողի արինը, կյանքը, որդին շխնայի... Գլուխս եդ եմ  
դրել, որ դսին դուրբան անեմ,—ասում է Աբովյանի  
հերոսը: «Վաղուց էս մուրազը սրտումս կար, վախտ չէի  
հարում»: Եվ Աբովյանն իր հերոսի մուրազը կատա-  
րեց: Աղասին իր հաղթ բազուկը և կտրուկ սուրը, յուր  
բովանդակ կյանքն ի սպաս դրեց ռուսական բանակին:  
Վերհիշենք թե ինչպիսի հրձկանքով նա ներկայացավ  
գեներալ Մադաթովին իր «սրտի հասրաթը» կատարե-  
լու և կատարեց: Դա 1827 թվին էր, ռուս-պարսկական  
պատերազմի օրերին, երբ ռուսական բանակի հաղ-  
թարշավի առաջ ընկավ «Երևանու հազար տարեկան  
քավթառ, պառաված, չորս կողմը խանդակով կապած,  
բրջերով զայիմացած բերդը», սիմվոլը զառամած

<sup>1</sup> Անդ, էջ 68:

պարսկական բռնապետութեան: Երևանի բերդի առումը ընդհանուր ցնծութիւնն է առաջ բերում «Ղզլըաշու շա՛ր, անի՛րավ լծի տակ հեծող» հայերի հոգում: «Սալ-դաթի տուտը հենց բերդը մտաւ թե չէ, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասուէքը էլ չէին թողում, որ մարդի բերան բաց ըլի: Բայց ով սիրտ ուներ, լաւ էր տեսնում, որ էն ձեռներն, է՛ն աչքերը, որ քարացել, սառել երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար»<sup>1</sup>: Թե ինչքան ճշմարտացի է տվել Աբովյանը իր այս տողերի միջ հայերի ընդհանուր բերկրանքը իրենց ֆիզիքական գոյութեան ապահովութիւն բերող, կուտուրական վերելքի դործին նպաստող ռուսների նկատմամբ, այդ մասին է վկայում նաև ռուս ժամանակակիցներից մեկը. «Еривани, маляутка, едва начинающий лепетать, видя наших кричит по русски здравствуй»<sup>2</sup>:

Երևանի բերդի առման ժամանակ էր, որ հերոսի մահով ընկնում է նաև ռուսական բանակի առաջամարտիկ դարձած հայ օֆիցերը՝ Աղասին: Աղասու հաղթական մահով էլ ավարտին է հասցնում Աբովյանն իր վեպը՝ «Վերք Հայաստանին»:

Հակառակ եվրոպական մի շարք մեծ վեպերի հերինակներին, Աբովյանը անտարբեր չէ իր հերոսների ճակատագրի նկատմամբ: Վերջիններին լացի հետ տրտմում է նա, հաջողութեանների դեպքում՝ ոգևոր-

<sup>1</sup> Անդ, էջ 208.

<sup>2</sup> „Кавк. Сборник“ Т. I, стр. 186.



Ղում: Այդ հանգամանքը (սուբեկտի ներկայությունը) ջերմացնում է Աբովյանի երկը, դարձնելով այն սրտի արյունով գրված գիրք: Տեսեք թե ինչպիսի սրտակեղեք տողերով է ողբում հեղինակը իր հերոսի (Աղասու) մահը: «Ա՛խ՝ էլ ի՞նչ գրեմ, ձեռք թուլանում ամ, սիրտս արին կաթում... Ա՛խ՝ բաս Աղասու սուքն ո՞վ անի, նրա ջիվան ումբոն ու օրը ո՞վ լաց ըլի: Ե՛ս, ես ողորմելիս՝ նրա գերեզմանին դուրբան, ա՛խ՝ բաս նա՛ որ էնքան երեխա ժամանակս իր ծնկան վրա խաղացրել ու ինձանով մխիթարվել ամ, բաս ես քա՛ր պտի ըլիմ, որ նրա սուքը չանեմ»<sup>1</sup>:

Չնայած նրան, որ Աբովյանի «Վերք»-ը վերջանում է հերոսի՝ Աղասու, Մուսայի մահով, բայց և այնպես «Վերք Հայաստանի»-ն լավատեսական ողբերգություն է, որովհետև Աղասու գործը հաղթությամբ է պսակվում, նրա «մուրազը» կատարվում է, «Ղզլբաշու շա՛ր, անի՛րավ շնչից» ազատագրվում է Հայաստանը՝ ռուսների օգնությամբ: Երախտապարտ հեղինակը «Ջանգվի» բերանով, որ հայ ժողովրդի սիմվոլն է «Վերք»-ում, իր ողջույնն է հղում քույր Վոլգային՝ այսինքն ռուս ժողովրդին, «Բացե՛ք զճակատ ձեր, ցնծացե՛ք յամայր. իմ քաղցր Վոլգայ քույր, հոգայ միշտ զձեր ճար: Ես դիմ մտերմութիւն ցուցից նմա համակ, նա զիւր քաղցրութիւն տացէ Ձեզ՝ որդեակք: Այս կապ անխզում, այս սէր սրբազան մնացէ ի մեջ ի կյանքս յաւիտեան: Դուք զորացարուք, որդիք Արամեան, եղբրուք ընդ միմեյինս սիրով միաբան: Սէր, խաղաղութիւն պահեն զամենայն զազգս և զազինս ի բարօրութեան»:

<sup>1</sup> «Վերք Հայաստանի», էջ 212:

Սերը, խաղաղությունը ազգերի բարդավաճման հզոր գործոն համարող Աբովյանը իր «Վերք»-ում ցույց է տվել հայերի հետ կողք-կողքի ապրող տեղացի թուրքերի նկատմամբ ունեցած իր բարյացակամ վերաբերմունքը ևս, միաժամանակ նշելով, որ նրանք էլ դժգոհ են պարսկական լծից. «Տե՛ր աստված, ե՛րբ ելլի, որ քո ողորմության գուռը բացվի ու մենք էս անիծած զզվաշի ձեռիցը մեկ օր ազատվինք»,—ասում է «Վերք»-ում հանդես եկող թուրքերից մեկը: «Չունքի սրանք երևու ըլելով՝ նկատում է Աբովյանը, չէին ուզում, մեկ օր էլա, նրանց ծառայեն ու շատ անգամ հայերի հետ միացել, քշել էին նրանց, ամա թրի զոռով եկել, էլ եղ երկիրը զավթել էին»<sup>1</sup>:—Հայերի հետ ընդհանուր ճակատ կազմող տեղական թուրքերը շատ անգամ զորավիգ են կանգնել դրացի հայերին: Հոգեկան մեծ բավականությամբ է նշում Աբովյանը այդ փաստը իր վեպում, այդ կերպ զրահորելով իր ինտերնացիոնալիզմը: Ականատես լինելով Երևանի Բերդի պարիսպների մոտ խռնված հալ գլուղացիների կրած ահավոր տանջանքներին, սր հարուցում էին Սարդարի ֆառաշները, տեղացի մի թուրք (Սվանդուկի խանը) տեղն ու տեղը պատուհասում է հայերին տանջող ֆառաշներին: Երախտագիտության ղեկավար լցված է մատնանշում Աբովյանն այդ փաստը. «Թուրքերի միջին՝ կարելի է մեկն էլա էնքան հայի թասիքը չէր քաշում, ինչքան էս օրհնած խանը...»: Սա էր, որ ազատում է դահիճների ձեռքից Քանաքեռից Երևանի բերդը բերած Աղասու հարազատներին և համազլուղացիներին:

<sup>1</sup> Անդ, էջ 151.

բին ևս. «Ա՛խ, —ասում է այդ թուրքը, —ճամփին փուշ ու տատառի գառնար էս անիծած Ղաջարի, որ մեր հողը չմտնիր: Աշխարհքը քանդեցին, աստված մեկ քար էլ ա՛ չի քցում սրանց դէմին, որ սատկին, փշանան: Էս ի՞նչ ա էս խեղճ խալիսի հալը: Մեկ աղջկա խաթեր էսքան տուն քանդվին՝ աստված ի՞նչպիս ա դարուլ անում...»<sup>1</sup>: Հայերի նկատմամբ ցուցաբերած նման բարյացակամ վերաբերմունքի փաստն մատնանշող Աբովյանը տեղացի թուրքերի բախտն էլ կապում է ուսաց հզոր զենքի հաջողության հետ:

Աբովյանի այս վեպում մենք տեսանք, թե ինչպես է «մարմին առել ազգի հոգին»<sup>2</sup>, երբ խոսեցինք «Վերք»-ում տեղ գտած հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի մասին: Աբովյանի երկը հնչում է նաև լուսավորյալ դադափարների պրոպագանդայով: Հայ ժողովուրդը, որ հնադարյան մեծ կուլտուրայի տեր մի ժողովուրդ է եղել, 19-րդ դարում էլ պետք է կուք-կուքի ընթանա լուսավոր ազգերի շարքում զենյի դիտության, գրականության բարձունքները: Ճիշտ է, այսօր նա (հայ ժողովուրդը) մուրացկանի ցրն-ցոտիների մեջ է, —ասում է Աբովյանը, սակայն «խալիսի մեղքովը չի, որ նա ճամփից դուրս է եկել, իրան մոռացել»: Մի կողմից օտար տիրապետողների ստրկացնող լուծն է, որ բանդել է հայ ժողովրդի ազատ ստեղծադորձ մտքի թուխքը, մյուս կողմից մեր ազգի մեջ եղած «լուսավոր մարդկանց» հանցադորձ անհո-

<sup>1</sup> Ահդ, էջ 150:

<sup>2</sup> Մ. Նալբանդյանի արտահայտությունն է:



գության հետևանքով է, որ կասեցվել է ժողովրդին դեպի լուսավորություն տանելու գործը: Նման կարդացողների ճոթքերը պետք է ծառիցը կապել, ամսով սոված պահել»,—ասում է Աբովյանը:

Ի դեպ ժողովրդի լուսավորության գործում անպիտան հոգևորականությանը ևս խստագույնս դատապարտում էր Աբովյանը նրանց մեծ մասի անհատակ տգիտությունը, շահամոլությունը, որկրամոլությունը նկատի ունենալով: «Մեռելների կես հողին հանող»—տեր Մարկոսի երգիծական դիմանկարը գծելիս, իր հերոսի բերանով այսպես էր հանդիմանում հեղինակը Տեր Մարկոսին. «...ա՛յ խանի խարաբա, ի՞նչ էլավ քեզ, մարդի փորը հո դժոխք չի՛, որ իրան ուտի: Սար ու ձոր տերտերի փոր: Ի՞նչ ղորդ են ասել՝ է՛: Բերնին ղուրբան, ով էս խոսքն ասել ա: Ավետարանի կոխքումը պետք է գրած, որ սրանք կարթան ու լմանան: Քիչ ա մնացել՝ որ մեզ սաղ-սաղ ուտեն: Երեխեքներու շորան դառած ման են գալիս, նրանց դարդը չեն քաշում, որ մեկ այբ բեն էլա, մեկ ճղի բզի սովորցնեն, հենց իրանց ֆիքրն են քաշում»<sup>1</sup>: Էգոիզմի, որկրամոլության հետ միասին Աբովյանի ծաղրած հոգևորականները գրի սկն ու սպիտակը ևս չեն կարող ջուր հանալ. «Ավետարանն կարթալիս,—գրում է նա,... Շատ անգամ էլ որդիանց որդի մեկ փիս, անմարս, դժարատամ, գլուխ կոտրող բառ էլ, որ չէր ուստ գալիս, հենց գիտես՝ թե սատանի թամբը կորավ, շատ կուսնալուցը, մոմը մոտ բռնելուցը, յա գիրքն էր էրվում, յա նրա միրուրը: Ամա էսպես բառեր վարավուրդ էին արել, մո-

<sup>1</sup> «Վերք Հայաստանի», էջ 23.

տանալիս՝ կամ գլխովն էին պտտում, կամ մեկ գիրն  
 ասում, մյուսը կուլ տալիս, յա թե չէ՝ սք-ը՝ սուրբ էս  
 կարդալու տեղ՝ սոխ կամ սխտոր ասում, սղ-ը սաղմոս  
 ասելու տեղ՝ ղսրախ.... թե մեկ վարդապետ էլ պատա-  
 հում էր էսպես վախտը, աստված հեռու տանի, էշը  
 մնում էր ցխումը խրված, կարդացողի ոտն ու ձեռը դող  
 էր ընկնում, լեզուն կապվում»<sup>1</sup>:

Ի դեպ այս տեսակ հոգևորականների եկեղեցական  
 երկար բարակ ժամաստցությունները «իշի հարսանիք»  
 որակող Աբովյանի այս հերոսը՝ Աղասին պանթեիզմի  
 դադափարի կրող է հանդես գալիս վեպում: Նա պար-  
 տականության կարգով է միայն, որ տարին մի երկու  
 անգամ եկեղեցի էր գնում, ասում է Աբովյանը: Ժամ  
 գնալիս Աղասու հոգին մռայլվում էր եկեղեցու մռայլ  
 կամարների տակ, իսկ բնության գրկում՝ վեհանում:  
 Բնության մեջ էր, որ Աղասին իրեն զգում էր հոգով  
 վերափոխված, ասում է Աբովյանը. «Հանդ էր դուրս գա-  
 լիս, իր մասիլն ու պտույլը, դաշտերի ծառն ու ծաղիկը,  
 երկնքի պայծառ արեգակի, լուսնի, աստղերի լիսը  
 տեսնելիս, նրա հոգին վերանում էր, խելքը թռչում,  
 շատ անգամ աչքերը ծով դառած՝ տեղն ու տեղը մնում  
 կանգնած. հենց իմանում էր՝ թե իրան դրախտը տա-  
 րան»<sup>2</sup>: Այս և հետագա տողերի մեջ այդ բնապաշտու-  
 թյան դադափարն է ընկած: «Հանդը դուրս գալիս՝ մեր  
 բիրդ Աղասին էնպես էր մտածում ու սիրտն էրվում,  
 ժամիցը գալիս՝ փառք էր տալիս աստծո՝ որ շուտ ար-  
 ձակվեցավ...»<sup>3</sup>: Ի դեպ այս ասելով, չենք ուզում ան-

<sup>1</sup> «Վերջ Հայաստան»-ի, էջ 17:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 18:

<sup>3</sup> Նույն տեղ, էջ 19:

գիտանալ այն, որ Աբովյանը քահանաների փորձաշարի կտոր չգտնելով հանդերձ, երգիծելով այդ տղետ հոգևորականներին, այնուամենայնիվ կողեր տեսնել լուսավոր հոգևորականին, որ հայոց մանուկների հոգևոր կրթության գործը ստանձներ: «Ամեն մի ազգի, և մանավանդ մեր ազգի, հոգևոր հիմնավոր կրթության հույսը կախյալ է հոգևորականներից», — գրում է նա: Եվ սակայն Աբովյանի իդեալի և իրականության մեջ մեծ անջրպետ կար: Իրականում Աբովյանի տեսած հոգևոր հովիվների հոծ մասսան տղետ էր, եսապաշտ և որկրամուլ: Աբովյանի կողմից երգիծված կղերը ավել էր բերում ազգին ո՛չ միայն իր տգիտությամբ, որկրամուլությամբ, բայց մանավանդ նրանով, որ ստրկական հնազանդություն էր քարոզում, «չարին չհակառակելու» ավետարանական վարդապետությունը: Վերհիշենք էջմիածնից եկած սրբազանի տված քարոզը պարսկական բռնապետության լուծը տանել չցանկացող աղատառեր հայերին: «Քրիստոս ինքը Պետրոսի ձեռքը թորն տալի, որ հայ քրիստոնեն՝ էլ թուր չի՝ վերցնի: Քրիստոնեի թուրը՝ աղոթքն ա, ժամը, պատարադը, պասը, ծոմը, ողորմություն տալը»<sup>1</sup>, — ասում է սրբազանը, սակայն «Վերք»-ում հանդես եկող աղատառեր հայերի բերանով Աբովյանը ծառս է լինում «չարին չհակառակելու» քրիստոնեական այդ մորալի դեմ: «Աստված դշին, հայվանին էլ յա շանկ ա տվել, յա պող, յա ատամ, որ շանկուի, հարու տա, կծի, իր գլուխը պահի», — պատասխանում է եպիսկոպոսին առարկող քաղաքացին և շարունակում. «Բաս թե իմանաք՝ մե՛ք

<sup>1</sup> «Վերք Հայաստան»-ի, էջ 99:



գլխին ի՞նչ են բերում՝ էս հավատի թշնամիքը, էն ժամանակ դուք ձերը կմոռանաք: Ամեն մեկ բեկ, մեկ խան սուրբ Աթոռը գալիս, մեզ կրակն ա դնում, էրում շամփուրի պես պտտում»<sup>1</sup>: Սրբազանի՝ «շարին չհակառակելու» քարոզին առարկող քաղաքացու երկախոսության առթիվ տված իր տողատակի ծանոթության մեջ Աբովյանը շտապում է տեղն ու տեղը իր անմիջական վերաբերմունքը հանդես բերել. «էս խոսակցությանը իմացողը կիմանա, թե ի՞նչ էր մեր խեղճության պատճառը: Էլ ես չեմ ուզում բերանս բաց անիլ»<sup>2</sup>: Սրբազանի այն թեզը, թե՝ «Քրիստոնեան Թրի կոթն էլ ձեռք չի պետք է առնի, որ քար էլ աղան գլխին», Աբովյանի կողմից դիտարկում էր իբրև միանգամայն դատապարտելի ամբաստանական թեզ: Վեպի հետագա էջերում Աբովյանը հայ ժողովրդի զավակներին՝ դսեղցի Թումանյան Հովակիմի, Ղարաբաղու, Մշու, Բայազետի, լեռնական հայերի, և մանավանդ Աղասու, Կարոյի, Մուսայի հերոսական սխրությունների դրվագներով ցույց է տալիս, որ հայ ժողովրդի զավակները 'սրբազանի ասած «Քրիստոսի խոսքերին չեն մտիկ տալիս»: Ահա թե ինչպես է ծառայել Աբովյանն իր «Վերք»-ում քրիստոնեական մորալ քարոզող կղերի դեմ: Նույն այդ մորալի դեմ է ծառայել նաև Բաֆֆին ասելով, որ եթե մենք վանքերի տեղ բերդեր կառուցեինք և խնկի տեղ վառող ծախեինք, մեր երկիրը ազատ կլիներ ամեն կարգի տիրաններից:

<sup>1</sup> Նույն տեղ, էջ 99—100:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 102:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 102:

«Վերք»-ի մեջ, գեղարվեստական այդ մեծ կտավի վրա, Աբովյանն, ինչպես ճիշտ կերպով նկատել է նրա առաջին քննադատը՝ Նալբանդյանը. «Որպես մի կախարդական հայելու մեջ ցույց է տալիս բանաստեղծը նաև հայոց ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմխիթար պատկերները ևս. այնտեղ տեսանում ենք գյուղերի տանուայրքը, ծանոթանում նոցա հասկացողության հետ: Բարեխիղճ բանաստեղծը հանդիպեցնում է մեզ հողևոր մարդերի, խոսեցնում է նոցա յուրյանց հասկացողության պես այս և այն բանի մասին, պատկերացնում է մեր առջև նոցա ունկնդիրների հասկացողության վիճակը, սահմանում է այն տխուր հարաբերությունը, որ կա նոցա մեջ: Մենք տեսանում ենք այդ Ապոլոնյան հայելու մեջ հայկական կյանքի մեռած պատկերը»...<sup>1</sup> Արդարև Աբովյանի «Ապոլոնյան հայելի» հանդիսացող վեպի մեջ տեղ են գտել նաև «հայոց կյանքի անշուք և անմխիթար պատկերները ևս», «հողև-վոր մարդերի», քեթխուղաների, գզիրների իրար մեջ խղած տխուր հարաբերությունները, նրանց կյանքի մեռյալ պատկերները, որոնք երգիծանքի արժանի օբեկտ են դարձել մեր հեղինակի համար:

Ահա ձեզ գզիր Կոստանի երգիծական դիմանկարը. «...Մեկ աչքը քոռ, դունչը ծուռ, էնպես որ միրքի կես փաշը մնացել էր երեսի վրա 'ցից ելած, խճըճված, կես փայն էլ բողազին, շանին կպել, շորացել՝ էնքան խոսացել էր ու հարայ տվել»<sup>2</sup>: Ինչպես տեսնում եք,

1 Մ. Նալբանդյան, «Մեռելահարցուկ», էջ 93—94.

2 «Վերք Հայաստանի», էջ 28.

չալ Եկարիչների նման, դդիր Կոստանի արտաքինը նկարելիս, Աբովյանը ելել է նրա շատախոս ու հարատվողի ներքին էությունից ևս: Մանրագլուխ տանուտերի, տեր Մարկոսի և սրանց շարքը լրացնող այլ քեզխուղաների ծիծաղ հարուցող արտաքինը նկարագրելիս, նրանց կեղտոտ կենցաղավարության հանգամանքն է շեշտված: «...Շատ ձեռների, երեսի, միրքի վրա տասը տարվա ախպ, կեխտ, թող ու մաղ կար. շատը բերանումը երկու հատիկ ատամ էլ ա՛ շուներ, էնքան ծերացել էր.... Սրանց ամեն բանն էլ կարգին էր... երգիծորեն առաջ է տանում Աբովյանն իր խոսքը,—արխալղները՝ դորդա, կարկատած էր, ամա շատ որ ըլեր, մեկ տասը, քսան տեղ, ամբելի չէ՛, էն էլ ունգ-ուանգ կտորներով.... հենց իմանա՛ շալ դաշարի ըլլեր, կամ շալ կատմի պոչ: Ամենիցը գլուխը նրանց բորանի քուրքն էր. երեսը կարմիր ներկած ինչպես մեկ թուրքի հինա դրած զարա միրուք.... փեշերը ու նեղ թևերը իշի նոխտի պես ունրներիցը կախ ընկած, գետինն էին հասնում ու դիպած տեղը թամուղ ավելում, հայլի շինում.... բազունի փափախի մորթին էլ հո՛ էնպես էր շալ ընկել ու ծերիցը բուրդը դուրս թափել, որ մեկ բարակ քամի կամ հով փչելիս էլ՝ ամեն մեկ մազը թև էր առնում ու գլխրներին սլար գալիս....»<sup>1</sup>:

Երգիծական հոյակապ շտրիխներով են գծված քեթխուղարների դիմանկարները ևս: Բարիկենդանի օրերին քեթ անող գյուղական «տանուտյարքի» ռեալիստական նկարագրի մեջ Աբովյանը հանդես է բերել իր սուր դիտո-

<sup>1</sup> «Վերջ Հայաստանի», էջ 29,



դականությունը, և ծաղրել երգիծանքի առարկա հանդիսացող գյուղական կյանքի, կենցաղի մանր ու խոշոր հոսի կողմերը: Այդ ամենը երգիծելիս Աբովյանը վարպետ ձևով համադրել է իրար խոսքի, դրուժյան և գործուժյան կոմիզմի տարրերը և հմուտ կերպով օգտագործել է մեր ֆոլկլորի մեջ եղած սրամիտ ու դիպուկ ոճերը, որով արդարև շատ հարուստ է մեր ժողովրդական բանահյուսության զինանոցը:

«Վերք»-ը գրական մի այնպիսի ստեղծագործություն է, որը ունի նաև պատմագրական մեծ արժեք. «Նրանով, ինչպես նկատում է ինքը՝ Աբովյանը, կարելի է իմանալ էն ժամանակվա մեր աշխարհի հալը»: Եվ իսկապես «Վերք»-ի մեջ, որպես մի կախարդական հայելու մեջ, ցույց է արված 19-րդ դարի առաջին քառորդի մեր հասարակական, քաղաքական, տնտեսական, կուլտուր-կենցաղային կյանքի պատկերներն ու անցուդարձերը, երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, ժողովրդի ապրելակերպը, նրա կենցաղը, բարքերը, ազգագրությունը, ֆոլկլորը՝ մի խոսքով՝ «Վերք»-ը այս առումով էլ ավելի հարուստ աղբյուր է, քան տվյալ ժամանակաշրջանի կյանքը պատկերող պատմագրական շատ ու շատ աշխատություններ: Ավելին: 1826—1827 թվերի՝ ռուս-պարսկական պատերազմի մասին եղած պատմական աղբյուրները ավելի պերճախոս չեն այդ պատերազմի մասին ընդհանուր պատկերացում տալու իմաստով, քան Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն:

Յոժոված լինելով մեծ ընդգրկումներ և ընդհանրացումներ անելու գրողի կարողութեամբ, և զարմանալի պայծառ հիշողութեամբ, պատերազմից 14 տարի անց գրելով իր վեպը, Աբովյանը կարողացել է հաճախ նաև մանրամասնությունների մեջ ճշգրտորեն տալ այդ պատերազմի պատմությունը, իհարկե գեղարվեստական վերակառուցումով: Թե ինչքան գեղարվեստորեն ճշմարտացի է պատմում Աբովյանի վեպը տվյալ դեպքերի մասին, վկայում են Թումանյանի արխիվում մնացած «Երևանի կոնլը և Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին» իբրև պատմություն» անավարտ խրագմենտալ աշխատությունը, որի մեջ Թումանյանը հավաքել է 1826—1827 թվականների ռուսական զինվորական իշխանությունների ու ականատեսների հաշորդած տեղեկությունները այդ պատերազմի մասին. այդ դոկումենտները ապացուցում են «Վերք»-ում պատմվող դեպքերի ու դեմքերի հարազատությունը: Բերենք մի քանի օրինակ: Հասան խանի Խըլլաբաքիլիսայի վրա կատարած հանկարծակի հարձակման նկարագրի խակությունը, տրված Աբովյանի «Վերք»-ում, հաստատում են ռուսական զինվորական տարեգրությունները: Ըստ այդ տեղեկությունների Հասան խանի հրոսակների հարձակումը արդարև տեղի է ունեցել վաղ առավոտյան, ինչպես որ Աբովյանի «Վերք»-ում է տրված: Խըլլաբաքիլիսեցիք, արգարև, հերոսաբար են զիմադրել, բայց թշնամու գերազանց ուժերի առաջ տեղի տվել: Ռուսական զինվորական տարեգրություններում այդ առթիվ կարդում ենք հետևյալը.

«Ի պատասխան Ձեր ամսի 16-ի № 20 գրության շտապում եմ հայտնել հետևյալը,—գրում է գնդապետ



Սեղարսամիդեն իր րապորտում գեներալ Երմոլովին՝ «Հասան խանը յուր Երևանյան և Մակուի հեծելազորով առավոտյան ժամը 5-ին, լուսադեմին հարձակվեց Փոքր Ղարաքիլիսայի վրա, որի բնակիչները պաշտպանվում էին մինչև ժամը 12-ը: Պարսիկների կողմից վիրավորվել և սպանվել են մոտ 400 մարդ»<sup>1</sup>:

Համաձայն այս տեղեկությունների Հասան խանի հեղափոխության կատարած բարբարոսությունները միանգամայն համապատասխանում են «Վերք»-ում պատմվող դեպքերին:

«Գաղան Հասան խանը նախ թափելով դժբախտ բնակչության վրա պատերազմի բոլոր սարսափները, այրեց դյուղը և գերի տարավ բոլոր նրանց, որոնք ի վիճակի էին հետևելու նրան, իսկ ծերերին հրամայեց սպանել... Շիրակից նահանջող ջոկատը անցավ Ղարաքիլիսայով մի քանի ժամ հետո, երբ այստեղից հեռացել էր Հասան խանը: Պետք է լռել այն ահավոր տեսարանի մասին, որ բացվեց մեր ղինվորների աչքի առաջ, դա մարդկային ցեղին ամոթանք է բերում»<sup>2</sup>:

Վերհիշենք հեղափոխության կոտորածը նկարագրող Աբովյանի «Վերք»-ի հետևյալ հատվածները. «Շուրազյալի դաշտը մթնեց, սևացավ, հեղափոխության մթնումը կորավ.... ինչպես մեկ կաթիլ գարնան անձրևի՝ անտիկ մորկի, քամու ձեռ ընկնի, կամ մեկ անմիջապես հարիւր գաղանի ռաստ դա ու մնա կանգնած նրանց միջի, էնպես մնացին շորս կողմը պատած, վերեն երկինքը, ներքեն հողը սառած.... Խոտի դեղերի»

<sup>1</sup> „Кав. Сборник Т. XXII, стр. 106—7.

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 106.



կրակն ու բոցը՝ խեղճ օղլուշաղի հարաց հրոցը, դարմանի ծուխը, կալերի մուխը՝ ամպի պես ելան, օրը խավարացրին, դեղի չորս կողմը առավ ալավը, տների մեջ ծով դարձավ լացը, էլ ո՛չ հեր կարաց որդուն համբուրի, էլ ոչ մեր կարաց տղին մեկ տեսնի: Հարսի սրտումը իր սերը մեռավ, փեսի բերնումը լեզուն չորացավ»<sup>1</sup>:

Խլղարաքիլխաչի կստորածի հատվածը Աբովյանը վերջացնում է Հասան խանի այս խոսքերով. «Փշրեցեք, ջարդեցեք, քանդեցեք»: Իսկապես այս պատգամները ամոթանք են բերում մարդկային ցեղին, ինչպես ամված է ռուսական ղինվորական տարեգրության վերոհիշյալ տողերում:

Նույնպիսի ճշմարտությանք է պատմում Աբովյանը նաև խլղարաքիլխաչիների դադթի մասին: Գաղթի, որին մասնակից է եղել և ինքը՝ հեղինակը. «Դեռ ցիսաճամփի էինք,—գրում է Աբովյանը,—որ Նազի խանը իր դռնշունովը եկավ, մտավ Ղարաքիլխա ու սարի դռնիցը՝ ամեն մարդ իր տան կրակի ծուխը տեսնելով, քթի ծուխն էլ հետն էր դուրս դալիս, ու աչքը խփում էր, որ էս կսկիծն էլա շտեսնի: Քոչվորի մեկ տուտը Ջալալովի էր հասել, մեկը դեռ հլա սարի էն կողմն էր: Թուրքերը՝ ջանդաքակեր դելի պես գլխըներխա պտիտ էին գալիս ու սարից, ձորից թվանքները մեզ վրա կրակում»<sup>2</sup>: Նույն այդ դադթի մասին ռուսական ղինվորական իշխանության հաղորդագրության մեջ կարդում ենք հետևյալը.

<sup>1</sup> «Վերք Հայաստանի», էջ 119—122.

<sup>2</sup> Անգ, էջ 148.

«Օգոստոսի 9-ին, ցերեկվա ժամը 2-ին Ղարաքիլիսայից Գյարգյառ շարժվեց գլխավոր զորախումբը: Կնչազ Սեվարսամիձեն վերջապահ՝ զորամասով մնաց Ղարաքիլիսայում մինչև որ ողջ զորասյունը ձգվեց դեպի Գյարգյառ տանող ճանապարհի վրա, ապա այրելով բոլոր կառույցումները, ինքն էլ միացավ զորախմբին: Թշնամին Համզաչիմանի կողմից դիտում էր մեր զորքերի շարժմանը, բայց չէր փորձում մոտենալ, զորքերը առանց մի գնդակ արձակելու՝ հասան Ղշլազ գյուղին, այստեղ թշնամու հեծելազորը սկսեց երևալ Դարբաս գյուղի մոտից և անցնելով Փամփակ դետի կիրճով, սկսեցին փոխհրաձգություն մեր առաջապահ զորախմբերի հետ»<sup>1</sup>:

Ի դեպ հետաքրքրական է դիտել և այն, որ ռուս-պարսկական պատերազմից տարիներ հետո, նախքան «Վերք»-ի գրությունը, ինչպես պատմում է Աբովյանի աշակերտ Գ. Աքիմյանը<sup>2</sup>, Աբովյանն իր աշակերտների հետ Բոլնիսում և Շուլավերում շրջագայելիս հարց ու փորձ է արել տեղի ծերերին քուրդ ցեղապետ Օքյուզ աղայի կատարած հարձակումների մասին «Կոլոնիեն» կողոպտելու կապակցությամբ, ինչպես նաև ամենայն մանրամասնությամբ նոթագրել է տեղացիներից Հասան խանի օրոք Շուլավերի երկու մելիքների՝ Սոսի Աղայի և Մելիք-Հովհաննանի կատարած սխրությունների մասին, Քաշվետու և Բոլնիսի սարերում, այդ ամենը հետագայում օգտագործելով յուր վեպում: Այս բոլորից պարզ է դառնում այն, որ արգարև իրական պատմա-

<sup>1</sup> „Кав. сборник“, Т. XXIV, стр. 10:

<sup>2</sup> Տես Ն. Շահազիզ «Ս. Աբովյանի կենսագրությունը», Երևան, 1945 թ., էջ 106—107:



կան դեպքերն ու դեմքերը շատ հաճախ ամենայն ճշմարտությամբ են տրված Աբովյանի վեպում:

Աբովյանի «Վերք Հայաստանին» իր ժանրային առանձնահատկություններով, իր արվեստով, իր գրելաձևով մի արտասովոր ստեղծագործություն է: «Վերք»-ի մեջ գրական տարբեր սեռերի տարրերը կան: Էպիկական և դյուցազնիերգական, քնարական, աշուղական, վիպական, դրամատիկական, երգիծական: Վեպի կառուցվածքը կուռ չէ, չկա մասերի համաչափություն, ներքին միասնություն: Շատ հաճախ կողմնակի շեղումները, միջահատում են դեմքերի ու դեպքերի ներքին տրամաբանական ընթացքն ու զարգացումը: Այս իսկ պատճառով տեղ-տեղ միջահատվում է վեպի սյուժետային կապը, խճողվում գրվածքի ֆաբուլան, կասեցվում գործողությունների առաջընթացը: Այսպես օրինակ՝ «Վերք»-ի 2-րդ գլուխը սկսվում է Երևանի բերդի նկարագրությամբ, որ սկսվում է պարսկական բռնապետության: Այդ ղնդանի մեջ է գցել տալիս Հասան խանը Աղասու համագլուխացիներին, նրա հորը վրեժ լուծելու համար ֆառաշներին սպանող Աղասուց: Սակայն Երևանի բերդը նկարագրելուց հետո Աբովյանը կասեցնում է Սարգսրի հրամանով բանտ նետված Աղասու հոր տառապալից պատմությունը, որ տեղի է ունեցել Աղասու կողմից ֆառաշներին սպանելուց հետո: Եվ սակայն, նախքան այդ մասին վիպելը, հեղի-

<sup>2</sup> „Кав. Сборник“ Т. XXIV, стр. 10.



նակը դիմում է պատմական շեղումների, հայրենասիրական էջեր է սփռում, մահուամի սուգի երկար բարակ պատմությունն է անում, նույն երեկոյան եկեղեցիներում հավաքված հայերի կոտորածի, նրանց Ղարս գաղթիցնելու պատմությունն անում, և վերջում միայն տեսնելով, որ պատմության կապը կտրել է, վեպի ընթացքից շեղվել, աշխատում է կիսատ թողած պատմությանը անդրադառնալ. «Ետ եմ դառնում, էլի իմ պատմությունն անեմ» և սակայն, շատ չանցած նորից հունից դուրս է գալիս: Այս բոլորից հետո հանկարծ սթափվելով և տեսնելով, որ նորից է նյութից հեռացել, դգաստանում է և ասում. «Երկարացավ, լսողը չի նեղանա, էլի գնանք մեր դժոխքը», այսինքն դառնանք Երևանի բերդի և նրա մեջ հեծողների պատմությանը: Աբովյանը, իհարկե, ինքն էլ շատ լավ զգացել է, որ այսօրինակ շեղումները խանդարում են վեպում պատմվող դեպքերի տրամաբանական զարգացման ընթացքին: «Լավ չի սկսած բանը թողալ ու էսպես քարոզ ասիլ, ես էլ գիտեմ, ամա սիրտս չի դիմանում, ինչ անեմ»: Իր այս խոսքերով Աբովյանը կարծեք կանխում է յուր քննադատին և ուզում է, որ նա հասկանա իր այդօրինակ շեղումների հոգեբանական պատճառները, և մենք շատ լավ պիտի ըմբռնենք, թե ինչ է նշանակում՝ «սիրտս չի դիմանում, ինչ անեմ» բառերի իմաստը: Չէ՞ որ վեպը գրելիս հեղինակի ներաշխարհը հուզված էր. «Հոն հրդեհ կար, ո՛չ մատչան»: Չէ՞ որ Աբովյանն էլ իր նկարագրած Կրեստո թագավորի մոնջ որդու նման շնորհ էր ստացել երեսուն տարվա փակ լեզուն բանալու, «բնության դրած զնջիլը կտրելու»: Աբովյանի լեզուն բաց անողը եղավ հայ ժողովրդի գլխին

փայլատակող պարսկական յաթաղանք, այդ ժամանակ էր, որ բացվեց նրա հրեղեն լեզուն և ձայնեց. «էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ աղգին չե՞ք ճանաչում»: Այդ լեզուն «լեքք Հայաստանին» էր: Ահա այսպիսի արտակարգ հուզված վիճակում ով էլ որ գրեր, կամ խոսեր, հագեբանորեն չէր կարող չափված, ձևած էպիկական հանդարտությամբ արտահայտել իր մտքերը, իր «սրտի հասրավը» պատմել, զերծ մնալով շեղումներից: Մենք դիտմամբ երկար կանգ առանք այս խնդրի վրա, որովհետև տվյալ հանգամանքը իր կնիքն է գրել նաև Աբովյանի ոճի վրա. նրա ոճը զուտ չէ և իր վրա կրում է անցման էպոխային հատուկ որոշ հեղինակների գրելակերպի մեջ արտահայտված զգացմունքայնության կնիքը: Այդ բոլորի հետևանքով է, որ անթիվ են զգայական բայերի կուտակումը, սրտի խորքից եկող ձայնարկությունները, հոմանիշների, նույնանիշների տարափը, ոճի խանդավառությունը: Եվ սակայն Աբովյանի վեպում նկատված սանտիմենտալիզմը, հակառակ եվրոպական մի շարք գրողների, ծայրահեղությունների չի հասնում, ինչպես օրինակ Ստերնի մոտ է, որը ո՛չ միայն ձախողություն կրած իր հերոսների զիճակն էր ողբում, այլ նաև կոտրած սալի և բարձած էշի. ո՛րպիսի չափազանցություն: Շնորհիվ այն բանի, որ Աբովյանը իր ստեղծագործության արմատներով մոտ էր կանգնած ժողովրդական բանահյուսության ատենքներին, այդ հանգամանքը ազատագրել է նրա «լեքք»-ը ընդգծված սանտիմենտալիզմից. այնուամենայնիվ զգացմունքայնության որոշ տարրերը ակերհայտ են վեպում: Հիշենք Հասան խանի Ֆառաշների կողմից առևանգված Թագուհու մոր բարձրացրած լաց



ու կահանը, Աղասու հետ կապված այն տեսարանները, երբ նա նամակ է ստանում իր սիրած կնոջից՝ Նազլուից: Վերջապես Աղասու մահերգը վիպող վեպի հատվածները, ուր նույնպես ակնհայտ է սանտիմենտալիզմի տարրերը:

Դրանով պիտի բացատրել, որ հաճախ վեպում հեղինակի արձակ խոսքը շափածոյի է վերածվում: Քանի, որ խոսեցինք «Վերք»-ի ոճի մասին, պետք է ավելացնենք և այն, որ Աբովյանի ոճը խիստ պատկերավոր է և բաղմազան, որ բխում է հեղինակի երևակայության բաղմադիմությունից: Մեծ հմտությամբ օգտագործված է վեպում սրամիտ և լակոնիկ ժողովրդական ոճերը, ասացվածքները, որոնք անթիվ են այնտեղ:

Ի դեպ գրական ուղղության տեսակետից էլ «Վերք Հայաստանին» ուշագրավ երևույթ է: Ոմանք բացառապես ողմանտիկական գրական սեռին պատկանող ստեղծագործություն են համարել այն, բայց ինչպես հայտնի է գրականության տեսությունից, այսպես կոչված մաքուր ողմանտիկական և մաքուր ռեալիստական ուղղության պատկանող երկեր չկան: Բալզակի ստեղծագործությունների մեջ շատ ողմանտիկական տարրեր կան, ասում է Գորկին, և շատ ռեալիստական էլեմենտներ Հյուգոյի մոտ: Աբովյանի այս երկն էլ մի սինթետիկ ստեղծագործություն է, ուր վարպետ ձևով հեղինակը խառնել է իրար ողմանտիկական, ռեալիստական, անգամ նատուրալիստական ստեղծագործությունների տարրերը: Եթե Աղասին, Մուսան, Կարոն արտակարգ և բացառիկ մարդիկ են, ողմանտիկական հերոսներ, ապա տանուտերի, քեղխուղաների, գզիր Կոստանի կերպարները ռեալիստական շտրիխներով են գծված,



ուր ի դեպ, ինչպես տեսանք, Աբովյանը փայլեցրել է իր երգիծելու տաղանդը ևս: Աբովյանի այս վեպում ոճի տիպականացման հաջող նմուշներ էլ կարելի է տեսնել: Քրդատանից եկած հայերը Աղասու հետ խոսում են իրենց բարբառով, Բանաքեուցիք՝ իրենց: Բնության նկարագրությունները, սակայն, որոնք մեծ մասամբ ֆոն են ծառայում Աբովյանի հերոսների համար, կամ նրանց հոգու թարգմանն են հանդիսանում, ուղղամտիկական շտրիկներով են վրձինված: Տարերային, տիտանային են այդ պեյզաժները, որոնք հաճախ ներդաշնակվել են Աբովյանի ներաշխարհին: Վեպում կատարվող որևէ անցք, շատ հաճախ, նախապատրաստվում է բնության համապատասխան սյուսիզների միջոցով: Այսպես օրինակ, խրվարաքիլիսայում Հասան խանի հրոսակախմբերից սպասվող դարհուրելի կոտորածների մասին վիպելուց առաջ, սպասվող այդ աղետի նախապատրաստումը տրվում է խռովահույզ բնության նկարագրի միջոցով:

Բնության նկարագրության մեջ էլ Աբովյանն իր զայրույթն էր թափում թշնամու գլխին, բնությունն էլ վրեժի ցասման գաղափարին է ծառանցվում թշնամու դեմ. «Մարերն ուզում էին պարսից գլխին թափին, խո՛րը տանին, նրանք մեր անտեր խալխի տուն, տեղ կրալում, իրանց սրի բերնով ղիմա-ղիմա տալիս»<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, վեպի քաղաքական նպատակագրումների հետ նպատակասլաց է նաև նրա արվեստը: Հայաստանի հուղթի բնությունը, որ կենդանագրված է «Վերք»-ում իր տարերային պեյզաժներով

<sup>1</sup> «Վերք Հայաստանի», էջ 131:

ինքնանպատակ չի մնում, այլ օժանդակ կռիւն է հանդիսանում հայերի մղած ազատագրական պայքարում: Այդ հանգամանքը իր դեղարվեստական գագաթնակետին է հասել «Զանգի» նկարագրութեան մեջ: «Զանգին» անցնելով Երևանի բերդի տակով միշտ և հանապազ իր «ջրի անբերան թրով» փորում է պարսկական բռնապետութեան սիմվոլ Երևանի բերդի հիմքերը: «Զանգին դիշեր ցերեկ, անքուն, անդարար, դժված, կատաղած նրա բաց դռին, նրա անիրաւ սրտին՝ իր պլոկած ջրի անբերան թրովը, քարի ուրաքովը վեր հատում, զարկում ա, բայց տեսնելով՝ թե չի՝ կարում ջիգրը հանիլ, վրեժն առնի, նրան քանդիլ, գոռալով, գանգատելով, կական բառնալով, քիշ-քիշ ձենը փորը քցում ու մունջ մունջ երեսը կալնում, Զանգիբասարի ծոցն ա մտնում ու հուլսը կտրած, սիրտը կոտրած՝ տխուր դեռ ու դեն ցւլրում, ցնորւում ու հազար բարի, հազար պտուղ ու արդյունք տալով, բաշխելով, ճամփին մոլորում, կորչում ու չի՝ կարում իր սիրուն քմորն էլա, Արաղին մեկ խաբար տանի, չունքի Երևանու թամարզու, կարոտ բնակիչքը նրա ճամփին բռնում, նրան սիրով խտտում, իրանց մեջը, իրանց հանդն են տանում, որ նրա սուրբ կաթնահամ ջրովը՝ իրանց էրված սիրտը հովացնեն, իրանց դառը քրտինքը նրանով լվանան ու նրա տված պտղովը իրանց գլուխը պահեն»<sup>1</sup>:

Ինչպես նկատել ենք, թեև Աբովյանն իր «Վերք»-ի

<sup>1</sup> «Վերք Հայաստանի», էջ 67:



առաջաբանում հիշատակում է այն մասին, թե վեպը գրել է մի շնչով (30 թաբաղեն մի գիշերում), բայց նրա աշակերտներից մեկի՝ Գևորգ Աբխաթանի պատմածից պարզվում է, որ մեր հեղինակը յուր այդ վեպի գրության գործը ձեռնարկել է տակավին 1838 թ. և մասմաս գրել, յուրաքանչյուր անգամ բերել, կարդացել է յուր սաներին «Աղասու պատմությունը» և 1840 թ. միայն ավարտել:

Որ հիրավի «Վերք»-ը գրված է ստեղծագործական դադարներով, այդ մասին են վկայում մեր ձեռքի տակ հղած Նբեանի Պետական թանգարանում պահվող վեպի առաջին և երկրորդ ձեռագիր տարբերակները: Մեկ անգամ ստեղծագործական ներշնչումով վեպը գրելուց հետո, Աբովյանը այնուհետև արվեստագետի աչք է ածել յուր գործի վրա, ներշնչման պահին թույլ տված հնարամիտ սալթաքումները և թերությունները վերացնելու համար: Նկատենք և այն, որ յուր վեպը վերամշակելիս Աբովյանի ստեղծագործական միտքը հրեմն նոր ընձյուղներ էլ է արձակել: Այսպես օրինակ, «Վերք»-ի առաջին ձեռագիր օրինակի մեջ տակավին գրված չի եղել վեպի բովանդակալից առաջաբանը, «Զանգի» խորագիրը կրող հատվածը և այլ մասեր: Բացի այս կարգի նորամուծություններից, «Վերք»-ի առաջին և երկրորդ ձեռագիրների բաղդադությունից ակնհայտ է դառնում այն, որ իր վեպը վերամշակելիս Աբովյանը գիտեր ինչը թողնել, ինչը ջնջել, ինչ ավելացնել և ինչ մասեր կրճատել: Թե ինչքան է շահել վեպը վերամշակումից հետո, այդ բանը պարզ երևում է «Վերք»-ի մեր ձեռքի տակ հղած առաջի և երկրորդ ձեռագիրների բաղդադությունից:



Ձմեռվա նկարագրությունը «Վերք»-ի երկրորդ ձեռագրում, որից և արտատպված է վեպը, շնորհիվ հեղինակի կատարած ստեղծագործական վերամշակման անհամեմատ ավելի հաջող է դուրս եկել, քան առաջին ձեռագրումն է։ Մշակումն այստեղ կատարվել է ո՛չ միայն առանձին բառերի դասավորության ուղղությամբ, այլև ակնհայտ հավելումներ է մտցրել Արուսյանը, պատկերները շնչավորվել են շատ մեծ վարպետությամբ։ Այս ամենը կենդանի են դարձնում Հայաստանի ձմեռվա իրական պատկերը։ Ծշմարիտ արվեստագետը ստեղծում է իրականի պատրանքը։ «Վերք»-ի առաջին և երկրորդ ձեռագրերի համեմատությամբ կարելի է տեսնել, որ հեղինակի կողմից երկրորդ անգամ կատարած վերամշակումից վեպը շահել է մեծ չափով։ Հույս չունենալով, որ երբեք, իր կենդանության օրով, կարող է տպագրվել «Վերք» Հայաստանին, ուստի հեղինակը սիրտ չի ունեցել մի անգամ ևս վերամշակելու իր վեպը մի քանի անհրաժեշտ կրճատումներ անելու։ Օրինակ մահաուլամի սուգի երկար նկարագրությունը, ինչպես նաև վեպում տեղ գտած այս կարգի թերություններն ուղղելու «Վերք»-ում մի տեղ Արուսյանը պատմում է այն մասին, որ Աղասին մորից և Նազուկից ստացած նամակները ինքն էր կարդում։ Վեպի վերջին գլխում, սակայն Անիի ավերակներում շրջող Աղասուն այս անգամ անգրագետ է դարձնում հեղինակը, մոռանալով, որ վեպի ընթացքում նա գրագետ է դուրս բերված։ Մի այլ տեղ Արուսյանը գրել է, թե Աղասու ծնողներին Քանաքեռից Երևան տեղափոխելիս ճանապարհին մայրը մեռնում է, իսկ վեպի հաջորդ էջերում կարդում ենք այն մասին, որ Աղասին

մորից նամակ է ստանում: Գրչի մի հարվածով ուղղելիք այս թերությունները նույնպես կվերացնեն հեղինակը, եթե տպագրության պատրաստելու հույսը ունենար և այդ նպատակով վերակարգար իր վեպը:

### III

Արուսյանի գրական հարուստ ժառանգության մեջ առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում նաև նրա «Պարասպ վախտի խաղալիքը», «Թուրքի աղչիկը», «Նախաշավիղը» և մյուս ստեղծագործությունները:

«Պարասպ վախտի խաղալիք»-ը գրված է Վերք Հայաստանի» վեպից անմիջապես հետո, 1841 թվին, ուր ամենից ավելի ցայտուն կերպով երևան է եկել մեծ լուսավորչի դեմոկրատիկ հայացքները, նրա աշխարհիկ լեզվով գրականություն ստեղծելու տենչերը, և վերջապես դիր ու գրականությունը ժողովրդական լայն մասսաների սեփականություն դարձնելու ձգտումները. «Շատ անգամ պարասպ ժամանակս միտք էի անում, Լնպես մեկ բան գրեմ,—կարդում ենք «Պարասպ վախտի խաղալիք»-ի առաջաբանում,—որ մեր խալխի սրտովն ըլնի... էս մտածելով՝ ուզում էի, որ գրած բանս ամեն մարդ հասկանա, ու էնդուր համար աշխարհաբար գրեցի...: Թե՛ գիտուն, խելոք մարդիկ ինձ պախարակեն, դու էլա ինձ պահիր՝ սիրելի ազգ, շունքի՛ իմ ուզածս էն ա, որ քեզ ծառայեմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերանումս ա»: Կավ իմանալով, որ գրականությունը մասսաներին մոտեցնելու մտքից հեռու կանգնած «Գիտուն մարդիկ» պետք է հարձակվեն իր գրքի

վրա, ուստի «էս գրքի ճամփի խրատը»-ի մեջ այս խոսքերով է Աբովյանը ճանապարհ դնում իր գիրքը.

Գնա՛, իմ խեղճ գիրք՝ գնա՛ մարդամեջ.

Գլուխդ քարշ գցիր, մի նեղանար հեշ:

Ականջդ փակիր, սիրտդ լեն բռնիր,

Ինչ ասեն, խոսեն, տար ու համբերիր:

Եվ իսկապես, Աբովյանին չի վախեցրել շարակամներից սպասվող քննադատությունը, և նա անկաշկանդ ի կատար է ածել յուր այդ մտադրությունը: Նպատակ ունենալով ժողովրդական լայն խավերին հասկանալի ու պարզ լեզվով մատչելի գիրք տալ, Աբովյանը գրական ժանրերից ամենից հարմար համարեց առակագրությունը, որ ավելի մոտ էր ժողովրդական ստեղծագործությանը, և ուրեմն ամենից ավելի սիրելի նրան, մանավանդ որ առակների ժանրը պայքարի ամենահատուկ և հարմար զենքերից մեկն էր միաժամանակ: Աբովյանը յուր առակների որոշ մասը վերցրել է Կռիլովից, Դիմիտրևից, Խեմնիցներից և ապա հայացրել ու ինքնուրույն ստեղծագործական տարր մտցրել նրանց մեջ: «Թարգմանություններս էլ էնպես եմ դուրս բերել, գրում է նա, որ մեր խալխի սրտովը ըլնի»:

Աբովյանի այս առակները հեռու են ճապաղ բարոյախոսությունից և քարոզչական բնույթ կրելուց: Առակներում սրելով յուր սատիրայի ծայրը և ծալովելով ալեգորյաների մեջ, մեծ լուսավորիչը կենդանական աշխարհի մեջ տեղավորեց լուսավորության, գրականության թշնամի մարդկանց. ծաղրեց, ծանակեց նրանց տգիտությունը, բռնությունը, սնապարծությունը, մեծամտությունը, նախանձը, ստորաքարշությունը:



Ինքնակենսագրական շատ տարրեր կան Աբովյանի այդ առակների մեջ: «Էս առակը,—գրում է Աբովյանը («Էջն ու Սոխակը» առակի մասին է խոսքը),—էնպես մարդի վրա ա գրված, որ ուրիշի միտքը չի հասկանում, իրան-իրան խոսում է: Իմ աշխարհաբար գրածների գլուխը շատ անգամ է էսպես բան տեսել, մարդի միտք չեն հասկանում, հենց իրանց իրանց խոսում են»: Առակների մի զգալի մասի մեջ Աբովյանը գեղարվեստորեն ընդհանրացրել է յուր ապրած ժամանակաշրջանի դեպքերն ու դեմքերը, որոնց մեջ հեղինակը անխնա նշավակել է ժողովրդի թշնամիներին: Նրա առակների մի զգալի մասի մեջ մեծ տեղ է բռնում նաև սոցիալական անհավասարության դեմ հեղինակի բարձրացրած բողոքը, ծառացումը շահագործողների, կեղեքիչների հանդեպ: Ծաղրելով, ծանակելով ձրիակերներին, հարստահարիչներին, Աբովյանը պաշտպան է կանգնել թույլերին, հարստահարվածներին (տես «Գելն ու գառը» և ուրիշները): Ի դեպ իր այս առակի սյուժեն փոխ առնելով Կոիլովի «Волк и ягненок» առակից, Աբովյանը սակայն առակում սրել է սոցիալական հակամարտության խնդիրը:

«Պարապ վախտի խաղալիք»-ի մեջ առակների, ասացվածքների հետ մեկտեղ տեղ են գտել նաև քննարական երգեր՝ «Բայաթիներ» խորագրով, որոնց մեջ հեղինակը քնարերգել է իր հարուստ հույզերը, համադրելով այդ ազգային սոցիալական խնդիրների հետ: «Բայաթիներ»-ը գրելիս էլ մի հիմնական նպատակի է հետապնդել Աբովյանը, այն է՝ աշխարհիկ լեզուն հարստացնել, դարձնել այն գրական լեզու: «Բայաթիքը էն մտքով եմ գրել, որ շունքի մեջլիսում, հացի վրա

թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայը հայե-  
վար ասի, որ քիչ-քիչ լեզուն քաղցրանա, շունքի ոչինչ  
բան լեզուն էնքան չի քաղցրացնիլ, որքան խաղն ու  
տաղը»<sup>1</sup>:

Աբովյանի հարուստ ու բազմաժանր ստեղծագոր-  
ծությունների մեջ ուշադրավ տեղ է գրավում «Թուրքի  
Աղչիկ» պատմվածքը ևս: Հումանիզմի բարձր գաղա-  
փախներով շնչող, և ինքնակենսագրական տարրեր պա-  
րունակող մի ստեղծագործություն է դա, որ համանա-  
բար գրված պիտի լիներ Աբովյանի՝ Թիֆլիսի գավա-  
ռական դպրոցի տեսուչ լինելու տարիներին<sup>2</sup>: Պատմ-  
վածքի նյութն է կազմում իր հետ պատահած մի դեպք,  
որ սակայն արված է գեղարվեստական վերակառու-  
ցումով: Գրվածքը սկսվում է դաժան ամառվա նկարա-  
գրով. «Քաղաքի շոքն ու կրակը շունչս բերանս էր  
հասցրել... մեկ օր էլ էս կրակը ջանս էր ընկել, սիրտս  
էրում, փոթոթում, որ տանից, տեղից դուռ ընկա ու  
դեպի թագավորական բաղնիքների հտևի բաղը երեմիշ  
էլա»<sup>3</sup>: Ի դեպ ամառվա նկարագիրը պատմվածքում  
տրված է այնպիսի վարպետությամբ, որ ընթերցողի  
մեջ շոգից շնչահեղձ լինելու պատրանք է ստեղծվում:  
Այդ նկարագրին հաջորդում է պատմվածքի լիրիքական  
հերոսի միջոցով տրված թագավորական բաղնիսների  
հետևի բաղի գայթակղեցնող խաղողով ծանրաբեռնված

1 Ե. Աբովյան «Գաբազ վախտի խաղալիք», էջ 13:

2 Պատմվածքի գրությունը թվականը ստուգապես հայտնի  
չէ:

3 Ե. Աբովյան լերկերի լիակատար ժողովածու, հատոր  
IV-րդ, էջ 21 ՀՍՍՏ Գիտ. Ակադ. հրատարակչություն, 1947 թ.  
Երևան:

վազերի նկարագրությունը: Բաղի կանաչագեղ թմբ-  
րից մեկի վրա փոքր ինչ հանգստանալու ժամանակ է,  
որ այգուց ոչ հեռու թուրքերի «գյուղխանի» կողմից լսե-  
լի է դառնում սրտակեղեք լաց ու կապան: Պարզվում է,  
որ թուրքերը մոլլաների ուղեկցությամբ մեռել են տա-  
նում դեպի գերեզմանատունը: Անսպասելի այդ տե-  
սարանը գրավում է գրվածքի լիրիքական հերոսի ուշա-  
դրությունը, և նա յուր կարեկցանքի այս խոսքերն է  
մրմնջում հանգուցյալի հասցեին. «Խաղաղություն հո-  
գուդ՝ հանգուցյալ մարմին, այ իմ պատկերակից հողա-  
ծին: Հավատներս մեկ չի, սրտներս հո մեկ ա, ժամը  
չէի գալիս՝ մեկ երկնքի տակ, մեկ երկրի երեսին էիր  
հո ինձ հետ կենում, ման գալիս. լեզուդ իմը չէր, պատ-  
կերդ, հոգիդ հո իմից էր»<sup>1</sup>: Այս տողերի մեջ Աբովյանը  
երևան է բերել յուր բովանդակ հումանիզմը, մի այ-  
լակրոն, այլազգի հանգուցյալի նկատմամբ, հանգա-  
մանք, որը և բացահայտում է նրա ամենքի վշտին բա-  
ժանորդ լինելու, ամենքի համար կարեկցել և թախծել  
իմացողի էությունը: Յուր հոգու և սրտի այդ զգայուն  
հատկությունները ավելի բացորոշ կերպով դրսևորված  
են այս պատմվածքի հետագա էջերում: Երբ թուրքերի  
հուղարկավորների թափորը իրենց ննջեցյալի դիակը  
հանձնում են հողին և հեռանում, գերեզմանատանը նո-  
րից մեռելային լուծյուն է տիրում, և սակայն շատ  
չանցած, վերստին սրտակեղեք մի ձայն է բարձրանում,  
օգնության կանչողը մի թուրքի աղջիկ է լինում: «Ինսա-  
նորդուն» պետք է օգնել, թեկուզ և յուր անձը վտանգե-  
լու գնով: «Ինսանորդուն» օգնելու ազնիվ գիտակցու-

<sup>1</sup> Նույն տեղ, էջ 25.



Թյունը մոռանալ է տալիս սլատովածքի հերոսին սե-  
 փական անձին սպառնացող ամեն մի պատահար, որ  
 նման պարագաներում կարող է մահվամբ վերջանալ:  
 Եվ սակայն նա շտապում է յուր փրկարար ձեռքը մեկ-  
 նել օգնություն հայցող քուրճի դժբախտ աղջկանը: «Ով  
 ըլի, թող ըլի, սրա դարդը ընչանք չիմանամ չեմ  
 գնալ»,—ասում է հուման սրտի տեր հեղինակը և ամի-  
 լացնում,—«յարալուն յարալուի սիրտը թեղ կհասկանա»  
 ասելն ու իր քայլերն ուղղելը տարաբախտ թուրքի աղջ-  
 կա մոտ մեկ է լինում. հասնելով այդ դժբախտի մոտ,  
 հետևյալ խոսքերն է ուղղում նրան. «Հա՛յ եմ, եվրո-  
 պացի չեմ, քո երկրացի, քո համշարի, մեկ հողի, մեկ  
 ջրի որդի: Քո կսկիծը, քո ձենը ինձ էրեց՝ բաջմ. ջանս  
 ուզես՝ քեզ կտամ, գլուխս ուղես՝ կծախեմ, ես չեմ էկել,  
 որ քեզ ինքմիշ անեմ, քո յարափալու փարալու սրտին  
 դհա ամելի ցավ հասցենեմ... Թե եթիմ ես, արի քեզ պա-  
 հեմ, Թե հիվանդ ես, թող գամ քեզ ծառայեմ... Թե քո  
 հավատը չունիմ, քո պատկերն ունիմ, Թե թուրք չեմ,  
 հայ, քրիստոնյա, մկամ թուրքին աստված կա, հային  
 չկա... Ասա գլխիդ մեռնեմ, ինձ մի մաշիր, մի սպա-  
 նիր»<sup>1</sup>: Այս հոգեբուխ տողերի մեջ Աբովյանի հումա-  
 նիզմը, ինտերնացիոնալիզմը, սերն ու կարեկցանքը  
 հարևան ժողովրդի դժբախտ, տարաբախտ մի էակի  
 նկատմամբ հասել է իր գագաթնակետին: Այսպիսի  
 մարդասիրական գաղափարներով շնչող Աբովյանի  
 գրական այս հուշարձանը պատիվ է բերում ամեն մի  
 ժողովրդի գրականությանը: Իր գաղափարական վեհու-  
 թյան հետ միասին, որով տողոսված է «Թուրքի Աղջիկը»,

աւշադրաւ է նաեւ գրւածքի գրական գեղարվեստական արժանիքները, որպիսիք են էմոցիաների հարստութիւնը, անմիջականութիւնը, որ արդյունք է հեղինակի սուրեկտի առկայութեան, ոճի պատկերավորութիւնը, մի տրամադրութիւնից ու հոգեվիճակից անցում կատարելը մի ուրիշի (յուամորից, վշտակցութեան անցնելը), փերջապէս պատմութեան խանդավառ տոնը, որ արձակ խոսքը տեղ-տեղ շարածոյի է վերածվել: Այս ամենը Աբովյանի «Թուրքի Աղչիկը» դարձնում են կյանքով առեւտրուն լավագույն ֆիլիգրան մի ստեղծագործութիւն:

Բոլորովին առանձնահատուկ տեղ է բռնում Աբովյանի ստեղծագործութիւնների մեջ նրա «Նախաշաւիղը»: Մենք արդեն խոսում ենք Աբովյան մանկավարժի մասին: Նրա «Նախաշաւիղը» մինչ ռեւոլուցիոն հայ մանկավարժական մտքի ամենաառաջաւոր մակարդակի վրա կանգնած գործերից մեկն է:

Հետեւելով իր ժամանակի համաշխարհային մանկավարժական մտքի առաջաւոր նվաճումներին և դրա վրա ավելացնելով յուր բաղմամբ մանկավարժական գործունեության փորձը, Աբովյանը իր ժամանակ տեսական խիզախ ընդհանրացումների հանգեց: «Նախաշաւիղ»-ի առաջաբանը դրա պերճախոս արտահայտութիւնն է: Խլելով մանուկների ձեռքից խրթնաբան գրաբարով գրած «Նարեկը», «Աստվածաշունչը», Աբովյանը խստագույնս դատաւարտեց նաեւ «Նրկաթե գավազանով» կրթելու մեթոդը, որ «մանկավարժական տեղոր» էր



անվանում Հովհաննես Թումանյանը: Մանուկների համար գրած իր դասագրքում՝ «Նախաշավիլ»-ում Աբովյանը ղեկավարվեց այնպիսի սկզբունքով, որը գյուրացնում էր աշակերտների ուսուցման գործը, հաշվի առնում նրանց հոգեկան կարողությունները, բնական ձգտումները, տեսական գիտելիքները, այդ ամենը շաղկապում էր գործնականի հետ: Բնության երևույթները բացատրելիս Աբովյանը առաջարկում էր տանել աշակերտներին բնության գիրկը, որովհետև «բնությունը ևս մի վայելուչ և իմաստավոր դպրոց է», — ասում էր նա:

Առաջին աշխարհաբար լեզվով գրված այդ դասագիրքը բազկացած է երեք մասից՝ առաջին ներածական մասում հեղինակը բացատրում է մանուկներին զրի ու զրականության անհրաժեշտությունը: Երկրորդ մասը, տառերի ուսուցման մեթոդին է վերաբերում, երրորդը՝ ընթերցարանը: Ուշագրավ է ընթերցարանի նյութերի ընտրությունը, ուր Աբովյանը հետապնդում է մի նպատակի, այն է՝ լուսավորության, հումանիզմի պատգամներ տալ «հայոց դեռատի մանուկներին»:

Աբովյանի թողած ժառանգության այս հարուստ բաժինը ևս մենագրական ուսումնասիրությունների և գիտելիքների նյութ է դարձել սովետահայ մանկավարժների համար, որոնց աշխատանքների մեջ հանդամանորեն լուսաբանված են Աբովյանի տեղն ու դերը հայ մանկավարժական մտքի զարգացման պատմության մեջ:

Ի՞րենց բովանդակությամբ, արվեստով, բարձր գաղափարականությամբ շնչող Աբովյանի բովանդակ ստեղծագործությունները, բայց մանավանդ նրա «Վերջ Հայաստանի»-ն, խոր հետք են թողել մեր գրականու-



իլյան մեջ: Մեծ է Աբովյանի խաղաղած պատմական  
 դերը հայ ժողովրդի քաղաքական կյանքի և նրա գրա-  
 կանության պատմության մեջ: Արդարեւ, «Անցյալի մեծ  
 արվեստագետները սլատկանում են աշխատավոր ժո-  
 ղովրդին, նրանց ջանքերը դուր չեն տնցել, նրանք լա-  
 վադույն մտքեր են առաջադրել, մտքեր, որոնք օգնել  
 են ժողովրդին առաջ ընթանալու և դրանով իսկ գտնելու  
 ազատագրման ուղին» («Պրավդա»): Ահա թե ինչով է  
 մեծ խաչատուր Աբովյանի մատուցած ծառայությունը  
 իր ժողովրդին և նրա գրականությանը: Ահա թե ինչու  
 հայ ժողովուրդը պատրաստվում է այս տարի նշանա-  
 վորելու մեծ լուսավորչի առեղծվածային մահվան հա-  
 րյուրամյակը:



Պատ. խմբադիր՝ ՀՐ. ԲՈԶՍԲ  
Տեխ. խմբադիր՝ Վ. ԿԱՐԱՊՈՒԼՅԱՆ  
Կանտրոլ սրբադրիչ՝ Վ. ՏԱՐԱԽՉՅԱՆ

ՎՖ 04002 Պատվեր 244, Տիրամ 4000,  
Տպագրական 4 մամ., հեղ. 2,3 մամ.,  
Հանձնված է արտադր. 8/VI 1948 թ.,  
Ստորագրված է արտադր. 10/VIII 1948 թ.:

---

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից  
Պոլիգրաֆի և Հրատ. վարչության  
№ 3 տպարան, Երևան, Արավելդյան 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042434



[204]

ԳԻՆԸ 2. Ռ.

35

